Էսսե

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

1

- Էգա՞ր,- ի պատասխան բարևիս հարցնում է հայրս: (Չեմ հիշում՝ եղե՞լ է, որ հայրս բարևիս պատասխանած լինի... Երևի ծնողներին բարևելը սխալ է...): Ինչպես միշտ, հանդիպել ենք դռանը, կանգնած է՝ գլուխկախ, սպասողական, հիմա թե մի բան չասեմ, ձեռնափայտին հուշիկ քայլ կտա: Ծուռտիկ ու մաշված է ձեռնափայտը, կտրել է իր տնկած ուռենուց և անխոս մերժել կոկ ու փայլուն այն գավազանը, որը քաղաքից պետք է նվեր տանեի:

- Տես...- առանց գլուխը բարձրացնելու ձեռնափայտը մեկնում է ծառե-

րին: Ծառերի սաղարթները սևացել են, նորելուկների տերևները կույ են եկել. քրոջս աղջիկը վազում է «ինկուբատոր» ճտերի հետքով, դիպչում է մի մատղաշ ծառի, և տերևները տաշեղների պես խշխշում են:

- Պուտ մի ջուր էղներ,- առանց գլուխը բարձրացնելու ասում է հայրս:

Կատուն դարանել է կարտոֆիլի թփերի տակ, որբ ձագերից մեկին հիմա հա՜փ կանի, քրոջս աղջիկը նկատում է՝ խփում կատվին և շոյում հավաքած, կրծքին սեղմած չորս-հինգ օրական ձագերը: Արդեն մի քանի տարի է թուխս չունենք, մայրս ասում է՝ թխսկան չկա, անցյալ տարի մի հավ թուխս նստեց, բայց շաբաթը չբոլորած բնակալը թողած փախավ: Մայրս ստիպեց, կապեց ձվերի վրա, թխսկանը կտցեց, կտցեց ոտքից կապված թելը, փախավ, մայրս ստիպեց, կապեց, թխսկանը թելը կտցեց, կտցեց, փախավ... Հիմա հազարից մի հավ թուխս նստելու ցանկություն չունի, հազարից մի թուխս չի համբերում՝ քսանևմեկ օր չի նստում ձվերի վրա...

- Քարեր ճաք տվեցին,- գանգատվում է հայրս: Ծուռ ձեռնափայտը հրացանի պես կողքի պահած, գլուխքարշ կանգնել է դեմս, կաշկանդել ինձ, և չեմ կարողանում տուն մտնել: Ասենք՝ ցանկություն էլ չունեմ. տանն եմ, էլի, ահա՝ հորս ոտաց տակի խարկված հողը, հորս ձեռնափայտը, խշխշացող տերևներով ծառը, «ինկուբատորի» որբ ձագերը, դարանակալ կատուն, ծառի տակ հևացող երեքոտանի շունը, որ սարերից հալածված իջավ (չգիտեմ մարդկանց դեմ ինչ շնություն էր արել՝ կամեցել էին սպանել, ոտքն էր կտրվել), մայրս մի կտոր հաց տվեց, շունը մնաց մեր դռանը կտոր հացի պարտքը հատուցելու և հիմա ծանր բարձրացնում է գլուխը, նայում ինձ, թե քեզ չեմ մոռացել, գիշերները ստիպում է իրեն՝ չի քնում, իրեն ստիպելով խռպոտ հաչում է, կիսախուփ աչքերում՝ կտոր հացի պարտքը...

- Ապրիլից էս կողմ անձրև չկա...

«Ես ի՞նչ անեմ»,- պատասխանում եմ մտքումս, բայց հորս գանգատին արձագանքել է պետք. շրջվում նայում եմ Արագածին. ամպեր եմ որոնում: Հայրս առանց գլուխը բարձրացնելու ասում է.

- Չկա...

Օրը հազար անգամ նայում է՝ ամպ չկա: Տարին երաշտ է: Արագածի չորեք կողմերը ծվարած գյուղերը օրը հազար անգամ ծոցվոր ամպեր են որոնում Արագածի կատարներին: Շա՜տ երաշտ է տարին:

Արագածի կատարը մի ծվեն ճերմակ ամպ է ծխում: Դա ամեն օր կա, թե՝ չծլի, չաճի, այդ ծվենը անձրև բերող չէ:

«Էդ ճերմակ ծվենը Լուսավորչի կանթեղն է»,- ասում եմ մտքումս:

Կա մի ավանդազրույց. Արագածի կատարին հավերժորեն վառվում է մի կանթեղ: Կանթեղը ոչ լեռան կատարին է նստած, ոչ կախված է երկնքից: Երկնքի հետ պարան-կապ չունի: Ասում են՝ Արագածի մի քարայրում տաճար կա, և կանթեղը հենց այդ անհայտ քարայրի աներևույթ տաճարինն է, ասում են՝ կանթեղում զօր ու գիշեր քրտինք և արցունք է այրվում, զօր ու գիշեր կանթեղը լույս է տալիս: Եվ ասում են՝ լույսը երևում է միայն նրանց, ովքեր անճար ու մոլոր են, տկար են ու հուսահատ: Երևում է՝ դառնում

ուղեցույց և հույս:

Երկար նայում եմ Արագածի ճերմակ ծվենին ու մտածում՝ հորս երկրացիները Արաքսն այս կողմն անցնելուց Արագածի կատարին տեսել են «Լուսավորչի կանթեղը»: Եվ ոչ ոք չի առաջնորդել՝ կանթեղն ինքն է գաղթականներին քաշել-բերել Արագածի փեշը և հորդորել՝ նստեք այս քարերին, և նրանք Արտենի լեռից մինչև Արա լեռ, Արագածի փեշին՝ ելնող ու իջնող քարեղեն ալիքների վրա, կողք կողքի խոնարհ շարվել են:

- Դու տեսե՞լ ես «Լուսավորչի կանթեղը»,- հարցնում եմ հորս:

- Սուրբ Լուսավորի՞չ:

- Չէ՞, Արագածի կատարի լույսը:

- Քու խոսք Արագածի ամպերու կայծակի՞ն կպատկանի... Հա՞... էս տարի քիչ է. էս տարի Արագածի ամպ ու կայծակ պակաս է:

Բակից երևում է դիմացի դարը՝ խանձված է, գորշ, ամռան կեսօր է՝ կուտակ-կուտակ քարերը տժժում են, և աչքերիս մեջ թրթռում են գունդ ու կծիկ տիվագոլի երակները: Դարուսին փայլփլում է ասֆալտապատ ճանապարհը, Երևան-Լենինական մայրուղին է՝ արևկող արած լորտուի պես փայլփլում է, գալարուն իջնում՝ պառկում ձորի կամրջին, կես անում մեր Կաթնաղբյուր գյուղը, անցնում Թալին ու գնում Լենինական: Չգիտեմ ինչու, չարանում եմ. հանկարծ ինձ թվում է, թե գյուղի երաշտը այդ ասֆալտով է գալիս: Ասֆալտից մի քանի քայլ դուրս, դարի վրա, մի ձի է կանգնած: Ձիուն քիչ առաջ ես մոտիկից տեսա՝ ավտոբուսի պատուհանից, կանգնած էր գավակը դեպի ճանապարհը, դեմքով՝ Արագած սարը՝ անթամբ էր, անսանձ, պարանոցից կախ մի կտոր պարան: Հիմա նույն տեղը, նույն դիրքով, ճամփից դուրս հրած քարի պես, անշարժ մնում է: Ո՞ւմն է: Ի՞նչ իմանաս, գուցե տիրոջ համար բեռ է դարձել կապը գցել է վիզը, քշել-հասցրել մեր դարը, հետո ձիուն թողած, կանգնել է ասֆալտի պռնկին, նստել վզվզացող ավտոներից մեկը, գնացել. Ձիերը հասկանում են գյուղ ու շեմից իրենց վտարելը, ձիերը հպարտ են՝ վտարվող գող կատուների պես չեն վերադառնում «Ձի,- ասում եմ մտքումս, - քեզանից քանի՞սը ներողություն պետք է խնդրեն, որ հիմա քո մասին մոռացել են: Ներողություն, ձի... ձի...»,- ուրիշ խոսք եմ որոնում ճամփեզրին մենակ ու մտածկոտ կանգնած ձիու համար և ինքն իրեն գալիս է.

«Ես ձեզ այդ վիճակից ինչպե՞ս հանեմ, ձիե՛ր,
Լացս զսպեմ ու ձեր... ցավը տանեմ, ձիե՛ր...»:

Եվ ինձ թվում է, թե առավոտից ես այդ էի որոնում, ճանապարհին ավտոբուսի տաք պատուհանին հպված, դարի գլխին, որտեղ տեսա ձիուն և ապա երևաց մեր գյուղը, հիմա, հորս դիմաց կանգնած բանաստեղծի այդ տողն էր իմ որոնածը՝

«... ձեր... ցավը տանեմ, ձիեր...»:

Լցված ծխախոտ եմ վառում, քայլում տան կողմը, բայց շեմքից ետ

դառնում ու նստում աստիճաններին: Ուզում եմ, որ հայրս էլ գա նստի կողքիս, բայց հայրս ետ էլ չի նայում, այդպես գլուխկախ մի քանի քայլ է անում, հասնում տան դեմով անցնող առվին, ծանր նստում է, ոտքերը հարմար տեղավորում ցամաք առվի հատակը, կողքանց աչք դիպցնում Արագածին և ապա դեմք ու հայացք խոնարհում առվի մեջ:

Հայրս մեր տան դեմով անցնող առվի հետ ավելի մոտ է, ավելի մտերիմ է, քան ինձ... Արագածի կողմ ավելի հավատով է նայում, քան դարի ուսին փայլփլող ասֆալտին, որը ինձ տուն բերող ճանապարհն է:

«Արագած,- նայում եմ հորս խոնարհած, նիհար ուսերին,- Արագած, հորս երևացրու քո լուսո կանթեղը»:

Մայրս գալիս նստում է կողքիս, շփում ափերի ճաքերը և սպասում, թե ես ինչ կխոսեմ:

- Մա,- ասում եմ,- շնորհակալություն պետք է հայտնել մեր ծառերին, որ էս համատարած երաշտի մեջ կանաչ են մնում, ապրում են:

- Ճիշտ է,- անմիջապես համաձայնում է մայրս,- մենակ ծառերին չէ, գառ, մեր կովին, մեր ոչխարներին. կուղարկենք չոլ, թե՝ քարեր կրծեք, մեզ համար կաթ բերեք... Մեղք կգործինք:

Մի բարդոց ամպ է երևացել գյուղի երկնքում: Արագածի կատարի ճերմակ ծվենը ծլել է: Հայրս շուտ-շուտ նայում է երկինք: Կեսօրին արդեն երկինքը ծոցվորում է, մեր կատուն երեսն է լվանում (ուրեմն՝ անձրև է գալու), հայրս գլուխկախ ետ ու առաջ է անում՝ առվի ափն ու տան դուռը, առվի ափն ու ետ...

- Անձրև է գալու,- ասում եմ մորս:

- Կարող է. ամպեր հնացած է...

Հարցական նայում եմ,

- Ամպերը ինչպե՞ս են հնացել, մա:

- Հնացած է, բա ի՞նչ է եղած, ամպ կերևա երկինք, էդ անիծվածներ թոփեր կկապին՝ չեն թողնի դատարկվի: Ամպեր կմնա՞ն, կհնանան:

Մորս ակնարկած «թոփերը» կարկուտի դեմ պայքարող հրանոթներն են:

Երկինքը սկսում է կաթկթալ, մի երկու հուռթի անձրևակաթ թշշում են կողքիս:

- Սկսվեց,- ափերս մեկնում եմ առաջ:

- Բո՜ւմ... Բո՜ւմ...

Հրանոթները խփում են ամպերին, չգիտեմ ով, չգիտեմ որտեղից նկատել է, որ ամպերը կարկտաբեր են՝ կրակելու հրահանգ է տվել, և երկինքը որոտալու փոխարեն հրանոթներն են որոտում.

- Բո՜ւմ-բո՜ւմ... Բո՜ւմ...

Ես գիտեմ այդ կարգադրողների ու կրակողների նպատակը՝ փրկել, կարկուտից պահել շրջանի ցածրադիր գոտու նորաստեղծ սովխոզների այգիները, թե կարկուտ է՝ թող սարերում թափվի, սարերում ծվարած գյուղերի գլխին, ասենք՝ Աշնակի, Կաթնաղբյուրի, Եղնիկի, Կարմրաշենի,

Հղարշիկի, Իրինդի, Դավթաշենի, Վերին Սասնաշենի, Ներքին Սասնաշենի... մեկ է, որ նրանց արտերը սար ու ձորերում կուտ գնացած հաց են, տնամերձերը... դե, տնամերձ հողերը տնամերձ են...

- Բո՜ւմ... Բո՜ւմ...

- Էդ անիծվածի ձեն լսել չեմ ուզի,- ասում է մայրս և շտապում տուն:

Հետո... Մի քանի րոպե հետո գյուղի էն ծայրից մի պտտահողմ է ծայր առնում, վիշապատիպ գալարուն մի պտտահողմ է կանգնում պոչին, գյուղի էն ծայրից պատահած տուն ու տնամերձ խառնելով հասնում է մեր դուռը, ծառի տակից խլում տնամերձից հավաքած հորս այդ տարվա խոտը, ծառը արմատահան անում, անցնում՝ դպրոցի պատուհանները ջարդրտում, անցնում՝ առնում Սարոյի բարդոցը, նոր կառուցած տան թիթեղապատ տանիքի կեսը կտրում, բետոնապատ ծխնելույզն էլ հետը, և իջնում ձորը: Երեխաները վազում են պտտահողմի ետևից, աղմկում, ծիծաղում, հայհոյում, լաց լինում՝ երկնքում ճոճղացող հավուճվի համար, երեխաները պտտահողմի հետքից խոտերն ու ճյուղերն են խլխլում, վիճում պոլդածվիզ[1] հավուճվի համար և վազում պտտահողմի ետևից:

Հետո հանկարծակի բռնկված աղմուկն ու ճիչը լուծվում է կեսօրվա տոթի մեջ, ամպերը քաշվում են Վերին Սասնաշենի վերևի սարերը, խտանում և այնտեղ ամեհի զիգզագում է կայծակը:

Հայրս սուսուփուս անցնում է կշտովս, մտնում տուն, առանց հանվելու մտնում անկողին և քրոջս աղջկան խնդրում.

- Ծածկե զիս, Գայան, դող կգա վրես...

Իջնում եմ գյուղամեջ: Պտտահողմի արձագանք-զրույցն է. ամպերի վրա կրակողներին են հայհոյում, ամպերի վրա կրակողներին պաշտպանում են, փորձում գիտական, ճիշտ գիտական բացատրություն տալ պտտահողմի ծագմանը (ընդհանրապես): Լուրը հասել է շրջկենտրոն: Փոստում հեռախոսը իրար ետևից զնգում է՝ շրջանում ծառայող համագյուղացիներն են,- հո մարդու վնաս չի՞ պատահել,- հեռախոսավարուհին իրար ետևից պատասխանում է,- չէ՛, չէ՛:- Համագյուղացի, շրջանի գյուղտեխնիկայի կառավարիչ Փիլոս Հախոյանը «Վիլիսով» հասնում է զրուցատեղ.

- Մարդու բան չի՞ պատահել:

- Չէ- պատասխանում են խմբով:

- Ասատրյանի կտուրը վերցրել-գցել է մի կողմ,- հայտնում են ամենամեծ վնասը:

- Ասատրյանի՞,- լայն ժպտում է Փիլոսը և աչքով անում,- էդ ոչինչ:- Ասատրյանը կոլտնտեսության նախագահն է:

- Սարոյի կտուրի կեսը պոկել-տարել է:

- Էդ մեկը լավ չի արել:

Եվ իրար լրացնելով ամբողջացնում են պտտահողմի պատկերը, կատակի տալիս, ծիծաղում երկինք բարձրացած խրձերի, ծառուճյուղի, հա-

---

[1] Պոլդածվիզ - վիզը կտրված:

վուճվի, երկնքից մլավող կատվի համար: Վերջը՝ գյուղի համար կարգին նորություն:

Սասնաշենի կողմը դեռ ճայթում են քշված, իրար գլխի հավաքված ամպերը: Տեսնես ո՞ր գյուղերի վրա են դատարկվում՝ անձրև՞ է, թե՞ կարկուտ: Հախոյանի հետ որոշում ենք՝ գնանք պարզենք, և այնպես գործնական ենք նստում «Վիլիսը», կարծես թե շտապում ենք մեկին, մի կարևոր բան կռվով փրկելու: Բայց երկուսիս ենթագիտակցության մեջ էլ նույն բանն է՝ անձրև տեսնելու ցանկությունը: Անձրևին կարոտել ենք:

Դարի վրա, ճամփից դուրս, ձին նույն դիրքով կանգնած է և հասկանում ես, որ նա մոռացել է իր տեղն ու ճոյությունը:

«Լացս զսպեմ ու ձեր... ցավը տանեմ, ձիեր...» Այս անգամ բարձրաձայն եմ ասում, և Փիլոսը խոսքն առնում է ինձնից ու հա՜ կրկնում և գնալով մեքենան թափ է առնում և ծնվում է մի տրամադրություն՝ տաք, անհանգիստ, եփվող, պահի մեջ կարող ենք սեր խոստանալ, կարող ենք կռիվ հայտարարել, կարող ենք մեքենան տանել և շրջադարձից թռչել Դավթաշենի ձորը.

Դավթաշենում ոչ անձրև է եկել, ոչ կարկուտ: Հետո ասֆալտին անձրևակաթերի բծեր են երևում, գետնին հասնելուն պես անձրևը ցնդել է: Գնալով աստղաձև փշրված անձրևացանները շատանում են և... Հանկարծ Փիլոսը զարմանքից արգելակում է մեքենան:

Վերին Սասնաշենի կողմից պոկված գալիս է խստերախ մի ջրհեղեղ: Հեղեղը խանձված սարի գույնն ունի, որտեղից իջնում է գալարվելով: Զարմանալի է, քիչ այն կողմ գարնան հեղեղների հունն է, իսկ սա այդ հունը թողած նոր ճամփով է իջնում. ի՞նչ իմանաս, հալածական ամպերից ինչքա՞նն է մեկեն դատարկվել մի քարի վրա, որ աշխարհի անձրևն ու կարկուտը տեսած այդ քարեղեն սարերում նոր-նոր հեղեղահուն է բացվում: Եվ սարի ճակատից իջնում է՝ քարեր գլդորտելով, ջրվեժելով, ծայրը հասնում է լեռնատակի ցորենի հասուն արտին, և արտի ճոթից փոշի է բարձրանում: Սարի ճակատը փորվում է. երևում է, որ խոր սպի է կանգնելու այդ կարծր լեռան ճակատին, ցածրաճ հասկերի տագնապը ավելանում է, արտում ծավալվում է փոշին և դեղինի վրա ավելանում է երակ-երակ սևը: Հետո այդ սև գալարները ձորափին միանում են և քարափի գլխից թռչում ձորը: Պղտոր ջրաթերթերում հողի գուղձեր կան, պայթում են և ջրվեժող քարափի գլխին փոշու ամպ է կապվել: Հեղեղի մի ճյուղը Ներքին Սասնաշենի դուրանը երիզող ձորով է գալիս, կամրջի մոտ պոռթում է, ծանր ալիքներ է շպրտում, և ասֆալտի վրա տիղմ է նստել: Իսկ ամենաավերիչը Ներքին Սասնաշենի դուրանի վրա քշողն է: Այս դուրանը միշտ ինձ հիշեցրել է Ուջանի դիմացի հարթավայրը, ճիշտ է՝ սա նրանից փոքր է, շատ պակաս է, բայց այս կողմերում, այս գորշ, ալիքավոր սարերի ու հազար տեղ թրատող ձորերի մեջ ճմռթված արտերի կողքին այս դուրանը լայն ժպիտի պես մի բան է: Սասնաշենցիները այստեղ ծխախոտ են աճեցնում, ցորեն ու խոտ են ցանում, փորձում են պտղատու ծառեր աճեցնել: Սասնաշենցիներ-

որը ահագին վերևում են նստած, բայց հողի գլխին շինություններ են հիմնել, չորանոց, պահակատուն: Հիմա հեղեղը օրը ցերեկով ավերում է այս լեռների ժպիտը... քանդում է ծխախոտի դաշտը, բույսերն առած քշումկտրում է ասֆալտը, անցնում, ցորենի հասուն արտը լայն շերտով ծայրից ծայր տափանում է ու միանում դուրանը երիզող ձորի հեղեղատին... Անցնող-դարձող ավտոները ծնկահար հեղեղատը կտրում են զգույշ և, չգիտես ինչու, ազդանշան են տալիս: Մենք զայրանում ենք, կռվարար նայում վարորդներին: Նրանց՝ այդ վարորդ-ուղևորների անտարբերությամբ, սասնաշենցիների այդ ավերվող դուրանը շատ էր մերը, դառնում էր միայն Փիլոսինն ու իմը, հեղեղի հետ քշվող-տարվող, դեպի Արաքս գնացող այդ լեռների հողը միայն մերն էր, Փիլոսինն ու իմը:

- Էսքան անձրև թե արդար բաշխվե՞ր,- վերջապես ասում է Փիլոսը:

Այնուհետև մինչև Աշտարակ ու դենը նոսր անձրևացան է, հալածված, շաղ եկած ամպերը նո՞ր-նոր հավաքվում են և, ով գիտե, թե ուրիշ ինչ է լինելու: Ճամփեզրին տժժան արտերից վեր՝ կուտակ-կուտակ լեռներում փռվել ու արածում են քարերի հոտերը: Թվում է, թե քարերի այդ գորշ հոտերը, բոլորը, գլուխներն արել են դեպի գյուղերը, կամակոր, ոչխարավարի քշում են կանաչ գյուղերի վրա: Էն էլ, է՞, Մուրոյի հոտն է... Երևում է Լեռնարոտը՝ սարի ուսին, բարակ երկնքի տակ մլարած: Նախկին Մաղդան է, Բակունցի Մուրոյի գյուղը:

«Հովվի հագին տեղական, թևերը կտրած «փոթ» էր, մորթը դեպի դուրս: Պայուսակը ցնցվում էր, երբ նա քարից քար էր թռչում...

- Մուրո, կարդալ գիտե՞ս...

- Ուստի՞ց:

... Մուրոն գյուղի հովիվն էր: Գյուղում մի «քոլիկ» ունի, որի դուռը դեռ չի կախել: Քնում է ոչխարատիրոջ տանը՝ հերթով: Ոչ ոք չունի: Սասունում էլ որբ է եղել...

- Մուրո, դու Լենինի անունը լսած կա՞ս...

- Հբա իմալ... Ես Լենինի զրույց լե գիտեմ...»:

- Էս Լեռնարոտի Արմենակին ճանաչո՞ւմ ես,- հիշում և հարցնում եմ Փիլոսին:

- Ի՞նչ Արմենակ:

- Էն որ պոլիտեխնիկ ինստիտուտում դասախոս է:

- Շատ լավ գիտեմ:

- Երեք տարով Ալժիր է գնալու:

- Ինչո՞ւ:

- Պայմանագրով՝ Ալժիրի համալսարանում դասախոսելու:

Լեռնարոտից դեն, որ չեն երևում, Սասունիկն է, Ավանը, Բյուրականին դեմ դիմաց, ձորի մյուս ափին՝ Օրգովը, իրենց ալիքվող, չորսդին ճոթ տվող լեռներով, լեռներում հավերժորեն արածող իրենց քարե հոտերով: Մուրոն, ասում են, այդ սարերից իջել, գնացել է Պռոշյան սովխոզ, այգեգործ դառնալու և չգիտեմ Մուրոյի արձակած հոտը հիմա ով է խառնում որձաքարե

հոտերին ու ջոկջկում:

- Լավ հասցրեցին, չէ՞,- Փիլոսը գլխի շարժումով ակնարկում է Արզնի-Շամիրամ ջրանցքի երկրորդ հերթի մայրուղին՝ լեռները գոտևորելով, դարձեդարձ ձգվում է:

- Էս վերին գյուղերի ձեռքերը էս ջրանցքին էլ չհասավ, խեղճերը հազիվ ոտքները թրջեցին:

- Չի էլ հասնի, դրանց ձեռքերը կարճ են,- Փիլոսը ծիծաղում է և լրջանում,- դրանց տերը Արագածի ամպերն են:

- Հասնում ենք մինչև Պռոշյան սովխոզի վերելքը, կանգնում ճամփից դուրս, բարձունքին: Ետկեսօրյա տոթը թավալվում է Արարատյան դաշտում, և շեներն ու այգիները ծրարված են խամրած քողով: Այնտեղից էլ հիմա Արագածի կողմն են նայում: Ասֆալտի երկու կողմերում Աշտարակի նորաշեն սովխոզների խաղողի ու պտուղի այգիներն են՝ մուգ կանաչ: Երաշտը Արա լեռից սողեսող իջել-շրջապատել է այգիները, դարանակալել վազերի ու ծառերի բների մոտ և սպասում է, որ մարդիկ սխալվեն՝ ոտքները դուրս դնեն այգիներից, ջուրը սակավ է, և մարդկանց շունչն է պահում այգիների կանաչը, մի կաթիլ քրտինքը մի օրվա կյանք է դառնում:

«Չքնեք»,- անկախ ինձանից շշնջում եմ և գլխի չեմ ընկնում՝ բառը ծառերի՞ն է վերաբերում, վազերի՞ն, թե՞ մարդկանց: Հետո նայում եմ Պռոշյան ավանին: Հանդարտ, մի տեսակ վստահեցնող խաղաղություն ունի: Սովխոզի դիրեկտոր Վանիկ Տելեմաքյանին ուսանող ժամանակվանից գիտեմ: Բանաստեղծություններ էր գրում: Մի շաբաթ առաջ Երևանի հիվանդանոցում հանդիպեցի: Ասում էր,- հիմա բանաստեղծություն կարդալու ժամանակ էլ չունեմ:- Գանգատվում էր,- ա՛յ տղա, էս բժիշկները հարյուր հիվանդություն են կպցրել, իրենց որ լսեմ հա՛ կպառկեմ: Բայց էգուց փախչելու եմ, այգիները հիմա չորացան:

«Չպառկես, Վաչիկ,- մտքումս կրքոտ խրախուսում եմ,- չքնես»:

Վերադառնում ենք գյուղ: Հեղեղի մասին գիտեն մի բան էլ ավելի:

- Սասնաշենցիներից երկու հարյուր քսան ոչխար է քշել: Իմանում են անվանական՝ ումից քանի ոչխար է տարել հեղեղը:

- Մեր փոթորիկը փառք էր,- մխիթարվում են:

* * *

Իրիկնապահ է: Արևմուտքում ամպերի կարմիր բարդոցները դիզվել են: Է՛ն կարմիր բարդոցի տակ գոնե մի գիրկ ամպ լիներ՝ երեսը լվացող կատվի տեսքով, որ ասեինք՝ հա, անձրև է գալու: Պտտահողմի արմատախիլ արած մեր սալորենին հայրս նորից կանգնեցրել-տնկել է, աղբյուրից դույլերով ջուր են բերել, լցրել բնին (փաստորեն շահեց) և հայրս փուշուփալախ է հավաքում, ծածկում ծառի բունը, որ արևը խոնավությունը չգողանա:

Մեր հարևան Հրանտը դաղրաբայլ գալիս է, բարևում ու ժպտում՝ բարի, մի տեսակ, ամաչկոտ: Եթե չխոսես, կկանգնի մի քիչ, կժպտա, կժպտա, գլուխը կկախի կժպտա ու կգնա: Բա ի՞նչ ասի, այդ ժպիտը նրա բաց, ան-

կեղծ զրույցն է: Հրանտի անխոսք, ծայրից ծայր հասկանալի այդ զրույցը չեմ փոխի հազար անգամ մշակված, ճկուն կատվի պես միշտ թաթերին կանգնող հազար բառ ու խոսքի հետ:

- Որտեղի՞ց, Հրանտ:

- Կանալից:

«Կանալը» Թալինի երկրորդ հերթի ջրանցքն է: Սրա սկիզբը, է՜, մեր գյուղից քսան-քսանհինգ կիլոմետր հեռու է, ցածում, Քարակերտ ավանի այգիների մոտ, բարձունքի վրա սկիզբը... էս ի՞նչ եմ ասում, սկիզբը ո՞րն է, մեր ջրանցքների սկիզբն ու վերջը ո՞րն է: Պատերազմից առաջ Հրանտի Մուշեղ հայրը գյուղի կալն ու կութը ավարտելուց հետո անկողինը շալակած իջնում էր Ախուրյանի ափը, ջրանցքը փորելու: Այն ժամանակ առաջին ու երկրորդ հերթ չկար: Թալինի ջրանցքն էին փորում՝ լինգ ու քլունգով, և գյուղերը հացքաղի ժամանակ էլ ջրանցքափորներ էին տալիս, և պատերազմի ամռանը Հրանտի հայրը անկողինը շալակած եկավ («Հայ, որտեղի՞ց» «Կանալից»: «Բա ո՞ւր ես գնում»: «Պատերազմ»), հովիվ ու ճամփորդների հարցուփորձին պատասխանելով, ոռերով հասավ գյուղ, անկողինը շալակից վար դրեց ու գնաց պատերազմ: Ու գնաց... Ջրանցքափոր բոլոր այրերը հերթով անկողինները շալակած Ախուրյանի ափից բարձրացան սարի գյուղերը՝ գնացին կռիվ, սարի գյուղերի կանայք, ծերունիներն ու տղա երեխեքը անկողինները շալակած իջան Ախուրյանի ափ-սահմանը: Պատերազմի հետ ջրանցքը քաշքշվեց, պատերազմից հետո հերթը Հրանտին հասավ, երեխա տղա էր, տան տղամարդ, գյուղում քարակույտերով արտերի տեր էր, վարում՝ կիսատ ջրանցքի: Ու երբ մայրուղին Ախուրյանի ափից սար ու ձորերի միջով հասավ, է՜, Հոկտեմբերյան, աջ ու ձախ չափեց իր կանաչ սահմանները, երևաց, որ ջրանցքի հետ «լույս աշխարհ» եկած Արագած, Արտենի, Քարակերտ, Դալարիկ շեներից ու նրանց այգիներից դենը, դեպի Արաքս, ահագին ոռեր կան, էլի մի հինգ-վեց ավան կտեղավորվի: Ջուր: Ուրեմն՝ Թալինի ջրանցքի երկրորդ հերթ, ուրեմն՝ սա առաջինն էր, էս առաջինի մայրուղու վրա պետք է դնել «երկրորդ հարկ». Ախուրյանից մինչև Քարակերտ մայրուղու թևերը կրկնակի բարձրացնել, Քարակերտին մոտիկ բարձունքից սկսել նոր մայրուղի, պորտալարի պես փաթաթել լեռներին, չգիտեմ ինչպես քաշել ու գնալ դեպի Արաքս: էդ հեչ. էդ «երկրորդ հարկի» դնելն ու մայրուղու բացելը հեչ, ազնիվ խոսք՝ հաշվենք եղած, թե ուրիշ մեկն էլ չկա՝ թողեք մեր հարևան Հրանտին: Կանի: Կարևորը Ախուրյանի ջրամբարի կառուցումն է: Դե, Ախուրյանը սահմանամերձ գետ է: Սահմանային գետերը կիսարար են լինում: Հիմա որ Ախուրյանի դեմը պատնեշ դրվի, ջուրը ափերից դուրս գա, սահման, բան չի հարցնի՝ աջ ու ձախ կքշի, կգնա: Ձախակողմի հարցը հանգիստ է, մենք ենք, մեր սահմանը: Մի քանի գյո՞ւղ է հարկավոր տեղահանել, խարխուլ, կավածեփ խրճիթներով մի քանի գյո՞ւղ... մի օրվա գործ է: Դժվարը աջակողմի սահմանամերձ թուրքական գյուղերի հարցն է: Գողհաթ շինություններով գյուղեր են: Տեսար, տեսար... ասացին՝ մեր նոր տները պատրաստ չեն, մեզ էլ,

եթե ուզում եք ճիշտն իմանալ, ջուր պետք չէ: Համբերեք, հլա տեսնենք: Թե չէ էն «երկրորդ հարկի» դնելն ու երկրորդ մայրուղու բացելը եղած բան է:

- Հրանտ, հիմա որտե՞ղ եք հասել:

- է՛,- Հրանտը շրջվում, ձեռքը մեկնում է Քարակերտի կողմ: Քարակերտից շատ ենք էն կողմ գնացել:

- Հրանտ, դու հիմնակա՞ն բանվոր ես ձևակերպված:

- Դե... ինչպե՞ս ասեմ,- ժպտում է ու նայում ոտնամաններին,- հիմնական եմ, բա ի՞նչ եմ.... Բայց սելավների ժամանակ կոլխոզին ջուր-մուր անել է, բան է, կօգնենք,- հայացքը պտտեցնում է գյուղից դուրս,– ըհը, ի՞նչ կա, չոր, մի քանի կտոր արտ է, սաղ մնան տրակտորները,- նորից խոնարհ ժպտում է,- կօգնենք, կոլխոզին էլ կօգնենք... Մեր գյուղն է, չէ՞:

- Իսկ մեր գյուղից ջրանցքում աշխատողները շա՞տ են:

- Կան: Բոլոր գեղերից էլ կան: Առավոտ բանվորական ավտոներ կգան, էս մեր գեղերից հերթով,- ձեռքը կիսաշրջան է գծում՝ ցույց տալիս երևացող ու չերևացող հարևան գյուղերը,- կհավաքեն բանվորներ, կիջնեն ցած:

Առավոտյան իջնում են՝ փորում, բետոնապատում ջրանցքի հունը, երեկոյան բարձրանում՝ նստում իրենց քարերին:

- Փոշին է շատ, փոշին, ղըռ է, չէ՞, ըհը՛,- հայացքով ցույց է տալիս զգեստ ու կոշիկներին նստած կարմրավուն փոշին, ժպտալով բացում է կուրծքը,- ամեն իրիկուն չլողանամ, տեղաշոր մտնել չի եղնի... Ջուր է դրե,- գլխով ակնարկում է դռանը կանգնած կնոջը: Տունը նորաշեն է, պատշգամբով, հատակապատ, ճերմակ տանիքով, կարծես թե բավարար է, բայց Հրանտը երկրորդ հարկ դնելու միտք ունի:

- Հրանտ, մեր սովխոզներում էս տարի լավ բերք կա՞:

- Ասում են՝ շատ լավ է... Եսիմ... Մեզ ո՞վ կթողնի մտնենք այգիներ:- Չի բողոքում, չի գանգատվում, պարզապես պատասխանում է հարցիս, ասում է անքեն, բարի ժպիտը մաղելով չոր առվում: Իսկ ես բողոքում եմ:

- Ինչպե՞ս թե՝ ով կթողնի, մինչև էդ այգիներն ու բերքը ջրանցքի վրա աշխատել ես, ավանների շենք ու շինություններին աշխատել ես, խոպանը մշակելուն մասնակցել, տնկումներին մասնակցել, հիմա էլ ամենածանր աշխատանքը այգեթաղն է՝ ամեն աշնան մասնակցում ես,- Հրանտի տեղակ ես եմ վիրավորվել,- ո՞նց չեն թողնում,- ես եմ բորբոքվել, իսկ նա շատ խաղաղ է և գլուխը կախ ժպտում է:

- էն մի ճութ խաղողն էլ չենք ուտի, մեզ պետք չի.- խոսում է հոգնակի, ընկերներին՝ ամեն աշնան, ձմեռնամուտին սովխոզներն այգեթաղի իջնող համագյուղացիներին մերձեցնում է իրեն ու վանում անձնական վիրավորանքը,- այգեթաղից հետո ամեն մեկիս, մեր փողով, մի կես-կես տոննա խոտ տան, շա՛տ շնորհակալ ենք: Անցյալ տարի տվեցին, էս տարի՝ տեսնենք:

- Հուռռի՛, հուռռի՛...

Հրանտի երեխաները շեմից պոկվում-վազում են. թաղի հոտը արևպա-

տից առաջ գյուղ է մտել, ճամփեքով ճոթ է տալիս, Հրանտի ու մեր ոչխարները տների ճամփեքը թողած, ցանկապատերից թռել-մտել են տնամերձերը, արածում են փութով ու տագնապով: Ոչխար են, բայց գիտեն, որ իրենց արածը անկարգություն է, չի կարելի՝ հիմա կհասնեն, կխփեն դնչներին:

- Հուռռի՜ի...- Հրանտն էլ է վազում:

Նորից եմ հիշում լքված ձիուն, հայացքով որոնում եմ: Ճամփից դուրս հրած քարի պես, կենում է: «Էս գիշեր Արագածի «Լուսո կանթեղը» կերևա այս հուսահատ ձիուն, և նա կգնա դեպի Արագածը»,- մտածում եմ և էլի դառնում ետ է գալիս կեսօրվա իմ գտածը.

«Ես ձեզ այդ վիճակից ինչպե՞ս հանեմ, ձիե՛ր,
Լացս զսպեմ ու ձեր... ցավը տանեմ, ձիե՛ր...»:

Հրանտի բակում երեխաները խառնվում են իրար, աղմկում են, աղջնակը միանգամից լաց է լինում, եղբայրը ձայնակցում է, մայրը բամփում է երեխեքին, Հրանտը ոտքը շեմից ներս է գցում ու շփոթված դառնում ետ:

- Ի՞նչ է պատահել, Հրանտ:

- Դանակ չունե՞ս:

- Ի՞նչ է պատահել:

- Ոչխարն է կսատկի:

Երեխաները շրջապատել են լարխված ոչխարին, երեխեքը ճնճնում են, բռունցքներով տրորում աչքերը:

- Խելառ խոտ է կերել,- բացատրում է Հրանտը,- դանակ չունե՞ս, մերը սեղանի դանակ է,- այսինքն նրանցից, որ Նոր տարու օրը կինը պատառաքաղների հետ կապոցով բերում-դնում է սեղանին, հաջորդ օրը հավաքում-պահում:

- Մա, դանակ չունե՞նք:

Մայրս երկրորդ հարկի պատշգամբում կանգնած աշուվաշ է անում. Հրանտի ոչխարը սատկում է:

- Չէ, գառ, մերը սեղանի դանակ է:

- Երեխե՛ք,- գոռում է Հրանտը,- վազեք գեղի մեջ: Շո՛ւտ,- և դառնում է կնոջը,- ի՞նչ ես կանգնել, դանակ բեր:

- Սեղանի դանակով ոչխա՞ր կմորթվի,- նեղսրտած պատասխանում է կինը,- մի հատ դանակ ի՞նչ է, չես առնի-գցի տունը:

- Բեր, բեր,- խեղճացած ժպտում է Հրանտը, բայց իսկական դանակ ճարելու հույսը չի կտրում, և դառնում է մյուս հարևանի տան կողմ:

- Հովա՜կ...

Հովակի տղան երկրորդ հարկի պատշգամբից անմիջապես պատասխանում է:

- Չկա՜,

- Համո-Համո՜ո...

Համոյի երկհարկանի տունը մի քիչ հեռու է, բայց կինը դռանը կանգնած է և արդեն գիտի՝ ոչխարը սատկում է, դանակ է պետք:

- Չկա, Հրանտ, չկա՜, սեղանի դանակ է, սեղանի՜,- պատասխանը գալիս է:

Հրանտը սեղանի դանակը քսում է պատերին, նայում ոչխարի կողմ (դեռ կդիմանա), աչք գցում երեխաների ճամփին և հույսը չի կտրում:

- Ազա՜տ...

- Հուսեի՜ն,- գոռում եմ ես, և Հրանտը զարմացած ժպտում է ինձ. մեր գյուղում, մեր թաղում Հուսեին անունով մարդ չկա:

Պատերազմի ժամանակ մեր գյուղերում մի մարդ հայտնվեց, ասաց՝ ես էս գյուղի նախկին բնակիչն եմ, էս էլ իմ տունն է, որ հիմա էսինչ մարդը նստել է: «Էս մարդու խոսք ճիշտ է»,- հաստատեցին գյուղի մեծերը: Ասաց՝ էս ձեր հարևան բոլոր գյուղերում իմ ազգ ու բարեկամներն էին նստած: «Ճի՛շտ է,- հաստատեցին մեր գյուղի մեծերը,- թիվ քսանին մենք էկանք, էս մարդիկ ասեցին՝ իրար հետ ապրենք, չհամաձայնեցինք, չէր էղնի: Մենք օսմանցու կողմից զարկված, քշված հայ, էս մարդիկ՝ օսմանցի, չէր էղնի: Ասինք, էն է, է՜, մեր էրգիր ու տուն ձեզ համար խլեցին՝ գնացեք, նստեք: Մարդիկ ելան-գնացին, կռիվ էլ չեղավ, եղած-չեղած երկու-երեք թվանքի կրակոց էր»: Հետո Հուսեինը մնաց մեր գյուղում, մեր գյուղի հովիվը պատերազմ էր գնացել, Հուսեինը դարձավ հովիվ: Գոտուց կախ մի մեծ չախու ուներ, ամեն գրպանում մի «Գրիգոր» դանակ: Ձու էինք գողանում, տալիս Հուսեինին, նա մեզ դանակ էր տրամադրում, որ մենք պատրաստենք մեր փայտե ատրճանակները: Ափսոս, շուտ գնաց, որտեղից որտեղ հորինվեց, թե Հուսեինը հովիվ չէ, այլ լրտես, մեծերը սկսեցին կասկածանքով նայել, երեխեքով ետևից վանկարկում էին՝ լըր-տե՜ս, լըր-տե՜ս, և խեղճ մարդը թողեց-գնաց, ու մենք մնացինք առանց դանակի. էլ փայտե ատրճանակներ չէինք պատրաստում: Իզուր խրտնացրին Հուսեինին: Եվ ընդհանրապես, հայրս, հորս ընկերները ժամանակին իզուր չեն համաձայնել՝ Հուսեինի ու նրա ազգականների հետ կողք կողքի ապրել, հիմա մեր գյուղում էլ չորսհինգ հերոսուհի մայր կլիներ, Աշնակում էլ, Դավթաշենում էլ, Վերին ու Ներքին Սասնաշեններում էլ և Արագածի չորսբոլորը հիմա շատ հոտեր կլիներ և վրաններ, մինչև անգամ՝ Արագածի կատարներին, ձյուների վրա: Եվ, վերջապես, Հրանտը սեղանի դանակով ոչխար չէր մորթի:

2

Գիտնականներն ընդհանրապես հետաքրքիր մարդիկ են... Կպել են Արագածին, է՜ ինչքան ժամանակ է Արագածից պոկ չեն գալիս, թե ե՞րբ ես ծնվել, ինչպե՞ս ես ծնվել, քո հերն ու մերը ովքե՞ր են, ասա՝ դու հրաբխածի՞ն ես, հա՞, հանգած հրաբո՞ւխ ես, թե՝ ծնվել ես երկրակեղևի ծալքավորումից՝ քեզ էդքան վեր բարձրացնողը գրանիտային մագմա՞ն է, հա՞, մագմա՞ն: (Տեսնես մագման ի՞նչ է, որ Արագածի մարմինը էդ մագմայից պետք է լինի):

Եվ եթե դու հրաբխածին ես, հարցնում են, քո փեշի աջակողմյան էն Ար-

տենի լեռը, ծախակողմի Արան քեզ հե՞տ են ծնվել, քո հասակակից հրաբխածիններ՞ն են, ասա... Իսկ Արագածը լռում է ու իր ամպե ժպիտով խառնում գիտնականների հաշիվները: Եթե լռում է՝ այստեղ մի բան կա, և ես էլ իմը կասեմ: Արագածը ո՛չ հրաբուխ է, ո՛չ մագմա, ո՛չ հրաբխածին է, ո՛չ երկրակեղևի ծալք ու մալք, Արագածը ծնվել է Հայկի հետ: Հայկի հայրենակիցն է, հայարյուն անմեռ ու անքուն պապ՝ թիկն տված ամպերին, ոտքերը կախած Արաքսի մեջ, իսկ փեշի՝ Արտենի ու Արա լեռները նրա աջ ու ձախ բռունցքներն են, գաղտնապահ բռերը... Միքայել Նալբանդյանը Պետրոպավլովյան զնդանում նստած ուշք ու մտքով հասել էր Արագածի ամպերը, ամպերի պես ազատ թափառում էր լեռներում, խորհրդածություններ անում՝ տեսնես ի՞նչ գաղտնիքներ ունի Արագածը, ե՞րբ է բացվելու և ով պետք է արևին տա: «Այն ժամանակ կմնա ոչ միայն շնորհակալ լինել նորանից, այլ պարծենալ նորանով Եվրոպայի առաջ»:

- Մարգարյանը տեղո՞ւմ է:

Մարգարյանը Արագածի պեռլիտի գործարանի դիրեկտոր Աղաջանն է. Թալինի շրջանում անունով է ամենաճանաչ: Միջահասակ, նիհար մարդ է, անհանգիստ ու շատ արագաշարժ և, չգիտես ում խելքն է փչել, վերցրել ու կպցրել է՝ «Արագածի փոթորիկ»:

- Այո, տեղում է,- պատասխանում է քարտուղարուհին,- բայց զբաղված է:- Եվ զգում է, որ ես, այնուամենայնիվ, ներս մտնելու փորձ կանեմ, գալիս կանգնում է դիմացս և զգուշացնում,- Իտալիայից և Բելգիայից հյուրեր ունի:

- Ավելի լավ,- ուրախանում եմ և փորձում կատակով համոզել,- ինձ էլ հենց դա է պետք:

- Ոչ, ո՛չ, չի կարելի, հասկանում եք, կարևոր խորհրդակցություն է:

- Ձեզ ասեմ, որ Աղաջանը իմ ազգակիցն է, ձեր գլխավոր ինժեներ Ղազար Մելքոնյանը իմ ընկերն է, և, եթե ուզում եք ճիշտն իմանալ, իտալացիների հետ էլ ծանոթ եմ:

- Որտեղի՞ց եք ծանոթ,- կասկածում է:

- Անցյալ տարի, երբ իտալացիներն Աղաջանին հրավիրեցին, Աղաջանն էլ ինձ հրավիրեց, և միասին գնացինք Իտալիա,- հորինում եմ:

- Յա՜, ընկեր Մարգարյանին ճանապարհելուց ես էլ եմ եղել, դուք չկայիք,- ջահել աղջիկ է, հեչ մտքով էլ չի անցնում, որ իրենց դիրեկտորը ինձ Իտալիա հրավիրելու իրավունք չունի,- ընկեր Մարգարյանը մենակ գնաց:

Դե եկ ու էս ջահել աղջկան բացատրիր, հասկացրու, թե գիտես՝ ճիշտն ասած, ուրախ եմ, որ չես թողնում այս կաշեպատ դռնից ներս մտնեմ, թող եվրոպացիները (որ երեկ նստած սպասում էին, թե մեր լեռներում երբ է մարելու վերջին, ամենավերջին շունչը) վեր կենան, կտրեն ջուր ու ցամաք, հասնեն թալինցիների ոտքը, թող ես ետ դառնամ առանց քո դիրեկտորին տեսնելու: Բայց և առիթ էր. հետաքրքիր կլիներ լսել, թե գաղթական Մխիկի որդին, Արագածի աջ բուռ-Արտենի սարի գաղտնիքին տեր դարձած Աղաջան Մարգարյանը ի՞նչ լեզվով է խոսում, ի՞նչ է խոսում էդ եվրոպացի-

ների հետ, նրանց, որ ի սեր պեռլիտի Աղաջան Մարգարյանին տարին մեկ իրենց երկիրն են հրավիրում, սիրտը շահելու համար խոնարհվում, բանկետներ են տալիս: Հե՜յ գիտի, հա՜, լիներ ու հիմա Աղաջանը զայրանար, ասեր՝ հերիք է չարչիություն անեք, ես ձեզ լավ եմ ճանաչում, ելեք գնացեք, ես ձեզ պեռլիտ չեմ տա: Վե՛րջ:

- Ուրիշ ովքե՞ր կան:

- Մոսկվայից կան, Երևանից, Թալինից:

Դուրս եմ գալիս: Գրասենյակից քիչ հեռու պեռլիտի կուտակն է, ամռան արևը խուլ բզզում է և թվում է, թե այդ շեկ կուտակն ու հանքանյութի մեծ ու փոքր կտորները տոթից են ծանրացել և աղացող մեքենաների աղմուկն ու հանքանյութի փոշին է ծանր, կարկամած: Արտենի լեռան գորշ փեշին սպիտակին է տալիս պեռլիտի հանքը, դեպի ծերմակը ձգված ասֆալտե ճամփան հալվել, փայլփլում է: Ժպտում եմ ծերմակ հանքին և նորից հորինում, թե Արտենի լեռը Արագածի աջ բռունցքն է, գաղտնապահ բուռը՝ բացել են և հիմա պեռլիտի ծերմակ հանքը կիսախուփ ափի մեջ պահված հայելի է, փայլփլող ասֆալտը՝ այդ հայելուց դեպի Արագած ավանը ձգվող լույսի շողք, ըհը՜, գալի՜ս, գրասենյակի բակով անցնում, կտրում է ճամփան ու մտնում ավանը: Ճիշտն ասած, Արագած շենին ավան կոչելը այնքան էլ չի վայելում. Ղարսը, որ, է՜, պատմական քաղաք է, հիմա-հիմա էլ քաղաքագլուխ ու ոստիկանապետ ունի, երջանիկ ականատեսներն ասում են՝ Արագածի համեմատությամբ՝ հեչ: Այնքանով են նման Ղարսն ու Արագածը, որ երկուսի շինությունները նույն տուֆից են, երկուսն էլ Ախուրյան գետին սահմանամերձ՝ մեկը աջից, մյուսը՝ ձախից: Կանգնածս տեղից դեպի վար, մի պռատ հորիզոն կանաչ է. դա Արագածի՝ այգեգործական սովխոզի այգիներն են՝ լուռ, մտածկոտ, հետո հայացքիս դեմ ցցվում է Արաքս գետի ձախակողմյան ափը: Թվում է, թե քիչ այն կողմ երևացող Հայոց լեռնապարից լավա է պոկվել-իջել դեպի գետը, վայրագ ընթացքի մեջ գետափին մեկեն սառել է, և հիմա այդ կուտակ-կուտակ սառած ալիքները հայացքս ետ են հրում, հորիզոնի կանաչ պատառը, հայացքիս հետ հրում են դեպի Արտենի լեռը, դեպի Արագած լեռը: «Տեսնես, էս շոգին Արաքսում ջուր կա՞,- մտածում եմ,- թե կա, հիմա հավաքվել-կպել է ձախակողմյան ափին. մեր ափն է լիզում՝ ջուրն էլ մռայլությունից փախչում է, ջուրը կանաչ է սիրում»:

Պեռլիտի հանքաքարի կատարից իջնում եմ, որ գնամ ավան: Արագածը համանուն այգեգործական սովխոզի մարդկանց ավանն է, համանուն ոչխարաբուծական սովխոզի մարդկանց ավանն է, համանուն պեռլիտագործների Արագած ավանն է: Այգեգործները հիմա կանաչ հորիզոնում են, ոչխարաբույծները բարձրացել են Արագած սարը, պեռլիտագործները Արագած սարի Արտենի-բուռն են բացում, էս ամառ - միջօրեին ավանում ո՞վ մնացած կլինի: Գրասենյակում մենակ նստած հաշվապահը հիմա խոսում է իր հաշվիչի հետ, հաշվիչի հատիկների չխկչխկոցները գլորվում են դատարկ փողոցում, շեկ սահմանապահը հաշվապահի պատուհանից

ներս է ծգվում. «Հը, ի՞նչ կա նորություն»: «Առանձնապես ոչինչ, շոգ է»: Չէ՞, ավան մտնել միտք չունի: Հետո երևում է պեռլիտի հանքի վարիչ Սասունը՝ շեկ, արևից ավելի շեկացած ու խանձված մազերով երիտասարդ է: Ավանից է գալիս: Ավանը երիզող ասֆալտապատ ճանապարհը կտրելուց ոտքերը թփթփացնում է, թափ տալիս ոտնամանների փոշին, թաշկինակով քրտինքն ու ժպիտը խառնում է իրար: Լավ է, միասին հանք կգնանք: Բայց պարզվում է, որ շատ կարևոր, անհետաձգելի գործի է:

- Ախր, արտասահմանից, Մոսկվայից հյուրեր ունենք, կարգին հյուրասիրել է պետք:

- Որ չհյուրասիրեք, չի՞ լինի:

- Ինչո՞ւ,- զարմացած նայում է:

- Հենց այնպես, օրինակի համար,- լուրջ եմ ասում, թե կատակ, ոչ ես եմ հասկանում, ոչ Սասունը:

Էսօր գործատեղ չեմ գնացել,- նայում է հանքի կողմը: Պեռլիտի ճերմակ հանքն է, հանքի վերին բլրակներին բազմած Արտենի սարը՝ պարուրված միջօրեի մշուշով: Եթե առավոտ լիներ՝ այդ խճճված բլուր-բլրակները, Արտենի սարը, ձեռքերում հայելիներ պահած երեխաների պես խաղ կանեին արեգակի հետ. Արտենի սարի կող ու կշտին «սատանի եղունգի» խիտ ցանք կա, իսկ դրանք, էդ «սատանի եղունգները», այնպես չարաճճի խաղ են անում արևի շողերի հետ, որ մանկությունդ ես հիշում: Մի երկու տարի օրս հենց այս Արտենի սարի փեշին էր բացվում ու փակվում: Ինձ լավ է ծանոթ արտաքուստ այդքան գորշ, մռայլ այս սարի ու արևի խաղը:

* * *

Ես շատ եմ սիրել «սատանի եղունգները». անունով մութ, բայց լուսավոր ու բազմագույն այս քարերը պատերազմի տարիներին մեր՝ երեխաներիս, միակ խաղալիքներն էին, տների՝ պահունի կրակը. բամբակե պատրույգը դնում էին քարին, գերանդու ականջով՝ չխկ... չխկ... չխկ, կրակը կար: Քարերը գյուղ էին հասնում Արտենի սարից, բերում էին ծերունիներն ու աղջիկները, որ իջնում էին Ախուրյան գետի ափը՝ Թալինի ջրանցքը փորելու:

Հետո իմացա, որ «սատանի եղունգները» է՞ն գլխից պետքական են եղել. է՞. ութ հարյուր հազար տարի առաջ մարդիկ սրանցից պատրաստել են գործիքներ (հնագետներն ասում են՝ շելլյան հատիչներ), պատրաստել ու գործել են հենց Արտենի սարի փեշին: Չէ՞, հորինվածք չէ՞, հնագետներն են վկայում Արտենի լեռան հնավայրը Խորհրդային Միության տերիտորիայում գտնվող մարդկային ամենահնագույն օջախն է: Հավատանք-չհավատանք, մարդիկ իրենց խոսքը կնքել են, և Արտենի լեռան կայանը «հնագիտության մեջ այժմ համաշխարհային ճանաչում է ստացել»:

Տասներկու-տասներեք տարի առաջ հնագետները Արտենի սարի հարավկողմյան լանջերը դեռ փորփրում էին, որոնում այդ նախաստեղծ, հնագույն օջախները, սրանց տերերի շելլյան հատիչները և չգիտեմ՝ էլի թե ինչ:

Իսկ սարի հարավային փեշին Արտենի նորաստեղծ սովխոզի զանգվածային խոպանն էր, շրջափակված Արտենի սարի ճոթերով ու Մաստարա սելավահունով: Խոպանի տափարակ մասը հիմա-հիմա էլ կոչվում է «Վերոդրոմ» (պատերազմի ժամանակ, ասում են՝ մի անգամ ինքնաթիռ է նստել), իսկ շարունակությունը, որ թեք էր և գնալով սեղմվում էր բլրակների ու սելավահունի արանքում, խոպանի այս հատվածը անուն չուներ: Թալինի ջրանցքի մի ճյուղը Արագած ավանի մոտից ծունկ էր տվել, անապատը գլխող սարերին քսվելով ոլորվել էր ու աղեղվել խոպանի գլխին: Ամիսներ հետո ջուրը բաց էին թողնելու ջրանցքը, աշնանը ջուրը գալու էր. խոպանը կոտրել՝ այգետնկման համար հող նախապատրաստել էր պետք: «Վերոդրոմի» քարերը շատ չէին անհանգստացնում, այստեղ անապատի պտուղփուշն էր շատ: Իսկ երբ փուշ հավաքող-այրող «կնկտոց ջոկատը» բրիգադիր Իշխանի կանչով,- կնկտի՛ք,- մտավ անանուն խոպանը, երևաց... որ սա ուրիշ է... քարեր, քարեր, քարեր... Եվ այդ քարերը արդեն իրենք իրենցով չէին, ունեին տեր և տերը դժգոհ էր իր սուփրեն ճմռթող քարերից... Սովխոզի գլխավոր գյուղատնտես Տիգրան Հարությունյանը չհամբերեց, իսկ ի՞նչ գաղտնիք է բացելու ակոսը... Եվ, աչքադեմի քարերը դեռ չհեռացրած, տրակտորիստ Նշանին կարգադրեց.

- Այսպե՜ս,- ձեռքով խաչ քաշեց,- երկու ակոս բաց: Մեկն էլ՝ կենտրոնից կգնաս: Շուտ արա: - Հետո հեռացավ խմբից, կանգնեց մենակ ու սպասեց: Խոպանի գլխին հավաքվածները նայեցին գյուղատնտեսին, այդ մռայլ, մի տեսակ խռոված դեմքով, խստությունը սև հոնքերի արանքում հավաքած Տիգրանին աչք դիպցրին, հարցական նայեցին իրար և մնացին լուռ: Հարց ու հարցականները շատ էին. ի՞նչ մարդ է այս քչախոս Տիգրանը... Եվ իրար կարգին չէին ճանաչում, ամեն մեկը մի տեղից եկել նստել էր նոր ավանի նոր շենքում... Արտենի նոր շենի և անանուն խոպանի տերերի այդ օրվա հարցականները շատ էին:

Նշանը միայն կես ակոս գնաց... Փոքր ու մեծ քարեր ելան, ակոսի մեջ հավաքվեցին գլուխ գլխի, հետո հիմնաշրջող խոփը դեմ առավ քարին, ճկռտաց ու կանգնեց: Օհո՜, այս հզոր տրակտորը, իր հիմնաշրջող խոփով, այստեղ խեղճանում է... Ուրեմն, երևացող քարերը հավաքել դուրս բերել, հիմնաշրջող գութանի փոխարեն տրակտորին կցել փխրեցուցիչ, հանած քարերը հավաքել, դուրս բերել, հետո հիմնաշրջել՝ քարերը հավաքել, դուրս բերել, նորից հիմնաշրջել՝ քարերը դուրս բերել, հարթեցնել քարերը դուրս բերել... Գլխավոր գյուղատնտեսը մռայլ կանգնած էր, ապա հոնքերի տակից նայեց Նշանին և ձեռքով հասկացրեց՝ տրակտորը ետ տուր, գութանը կջարդես: Հետո շրջվեց, նայեց Արտենի սարի կողմը: Անանուն անապատից ու ջրանցքից վեր, սարի ուսին երկու ջահել, մինչև գոտկատեղերը մերկ, ծղոտե լայնեզր գլխարկներով երկու տղա շեկ հողակույտին նստած ծխում էին:

- Ովքե՞ր են,- հարցրեց գյուղատնտեսը, չնայած գիտեր:

- Հնագետների բանվորները:

- Ի՞նչ են որոնում:
- Շելլյան հատիչ են ասում, ինչ են ասում՝ դրանցից:
- Ինչների՞ն է պետք:
- Ասում են, եթե գտնեն, ուրեմն այստեղ մարդիկ են ապրել:

Գյուղատնտեսը ծռմռեց ժպիտը, ոչ մի բառ չասաց, միայն ժպտաց, բայց հաջորդ օրվանից հնագետների էդ երկու ջահել բանվորները, որ մինչ այդ աննկատ էին, մլակի պես խցկվեցին ամեն առավոտ անապատի գլխին հավաքվող մարդկանց կոպերի տակ... Առավոտ շուտ, Մաստարա սելավն անցնելուն պես, ամեն մեկը հարկ էր համարում նայել՝ հնագետների բանվորներն եկե՞լ են: Աշխատում ու նայում էին՝ չե՞ն եկել և, չգիտես ինչու, ջղայնանում էին, որ նրանք ուշանում էին: Իսկ հնագետների բանվորները միշտ ուշանում էին. գալիս էին Երևանից, գալիս էին ճռճռան մի բեռնատարով, մեկը ղեկի մոտ նստած, մյուսը՝ կողքը: Հենց մեքենան երևում էր սարի ուսին, առաջին նկատողը բղավում էր.

- Եկան...

Հետո բերնեբերան էր անցնում:

- Եկա՜ն... Շելլյան հատիչները եկա՜ն:

Ջահելները իջնում էին ավտոյից, մինչև գոտկատեղը մերկանում, դնում ծղոտե լայնեզր գլխարկները, նստում կիսատ փոսի գլխին, ծխում ու նայում վար: Նրանց մոտից ամեն ինչ պարզ էր երևում. խոպանը, խոպանից ու Մաստարա սելավահունից այն կողմ՝ Նիկոլ թագավորի կառուցած երկաթուղին, երկաթուղային կայարանի սև շենքերը, դիմացի բարդին (հորիզոնի միակ կանաչ շունչը), եկաթուղուց դեն՝ Արտենի ավանը իր փոշոտ տներով, տների դիմացի քար ու խոպան տնամերձերով, սրանց կեսուպռատ փոշոտ ցանկապատերը, ավանի փոշոտ փողոցները, ավանի կիսատ շենքն ու շինությունները... Ամեն ինչ երևում էր՝ մինչև Հայոց լեռնապարը: Եվ այդ գորշ հորիզոնը ահագին հետաքրքիր էր, ու շելլյան հատիչներ որոնողները երկար էին նայում: Իսկ դրանից անապատը կոտրող մարդիկ զայրանում էին:

- Էդ լակոտներին էլ ավտո են վստահել...
- Իրր շատ շուտ են եկել, հիմա նստել նայում են...
- Դե, վեր կացեք աշխատեք... աշխատե՞ք... շանորդիներ:

Ոչ ոքի չէր հետաքրքրում՝ տեսնես կգտնե՞ն շելլյան հատիչներ և ոչ ոքի համար միևնույնը չէր, որ հնագետների ջահել բանվորները էդ հատիչները չեն որոնում, այլ նստում են... Հաբեթի ուժը չէր պատում, որ քարը գրկի ու գցի ավտոյի թափքը, շուռ էր գալիս նրանց կողմ,- նստե՞լ են, ձե՛ր...- ասենց, ընենցը,- արեք, է՛,- հետո նոր ընկերոջն է դիմում,- օգնի՛ր:

Խոփը դեմ էր առնում քարի, խոփը կոտրվում էր, տրակտորիստը խեղճացած նայում էր շուրջբոլորը, մի պահ չէր որոշում ասելիքն ու անելիքը, հետո հայացքը դիպչում էր սարի ուսին նստած կամ բզբզացող ջահելներին և տրակտորիստի բերանը բացվում էր.

- Ես ձեր պորտաբույծ...- հայհոյում էր ու հանգստացած ծխախոտ վառում:

Պողպատյա ճոպանը պոկվում էր դեպի սարալանջը քաշվող քարաբեկորից, լանջիվեր՝ դեպի սարի ուսը հայհոյանք էր գնում, քարը մեքենայի թափքից ետ էր գալիս թրմփում գետնին, դեպի սարի ուսը հայհոյանք էր գնում, քարը համառում էր, շարժվել չէր ուզում՝ նույնը, քարը չէր ջարդվում նույնը, մի հարվածով էր ջարդվում՝ հայհոյանքը կար ու կար՝ էլի սարի ուսն էր գնում...

Չէ՜, շելլյան հատիչներ որոնող ջահելները մլակի պես խցկվել էին անապատի գլխին հավաքված մարդկանց կոպերի տակ և դուրս գալ չէին ուզում: Գլխավոր գյուղատնտեսը գալիս, լուռ շրջվում էր, ավելի մռայլվում՝ քարերին վերջ չկա, նայո՞ւմ էր ջրանցքից վեր՝ սարի փեշին օր-օրի ավելացող քարե բլուրներին և գլխով ակնարկում այդ ձեռնաշեն բլրակներից քիչ այն կողմ, ճերմակ հողակույտին նստած տղաներին.

- Դեռ այստե՞ղ ես...

- Ընկեր Հարությունյան,- տաքանում էր բրիգադիր Վահագնը,- էդ անբանոներին էս տեղից քշել է պետք. երկու ամիս է նստած են մի փոսի գլխին, կարգին գործ չեն անում, մեր բանվորների տրամադրությունն էլ փչացնում են:

Իրականում բախտավոր զուգադիպություն էր, որ այդ բարակիրան, սիրունիկ ու ծույլ ջահելները եկել ու նստել էին քարհանք անապատը մշակող մարդկանց հայացքի տակ. անապատի հարուցած հոգնությունն ու տանջանքը մարդիկ թափում էին նրանց գլխին, ամեն մեկն իր ուզած ձևով սրտնեղությունն ու զայրույթը թափում էր այդ «շելլյան հատիչների» գլխին ու հանգստանում:

- Շելլյան հատիչ են ման գալիս, թե՝ էստեղ մա՜րդ է ապրել,- Վահագնը չէր հանգստանում,- հա՜, էս քարերը նրանք են ցանել, որ ծլի... էստեղ ոչ մի մարդ էլ չի ապրել, առաջինը մենք ենք... Թող վեր կենան գնան, թե չէ տղերքին կասեմ՝ կծեծեն:

Հետո եղավ, որ մի շաբաթ չերևացին ջահելները, երևի մնացել էին հնագետներին բողոքելու, թե ձեր նշահարված կոլերի գլխին քար է թափվել, թե մեզ ծաղրում-հայհոյում են, եկեք էդ մարդկանց մի բան հասկացրեք: Այդ շաբաթ խոպանի մարդիկ ավելի նեղսիրտ դարձան. անհասցե հայհոյանքը էն չէր՝ չէր հանգստացնում, շուտ-շուտ նայում էին սարի կողմ,- ո՞ւր են... Իբր թե գործ արեցին, հիմա էլ սանատորիա են գնացել...- մի քանի տեղ վեճ ու կռիվ ծագեց, Նշանն ու Վահագնը խռովեցին և հաշտվեցին այն օրը, երբ Արտենի լեռան ուսին հայտնվեց «չղջիկ» ավտոն...

* * *

Հիմա կանգնել եմ Մաստարա սելավի ափին, այնտեղ, որտեղից ավտոյով կտրում են լճացած ջուրը, մտնում Արտենի սովխոզի այգիները (տասներկու-տասներեք տարի առաջվա «Վերոդրոմն» ու սրա շարունակությունն անանուն խոպանը): Մի ժամանակ սելավահունի վրա գերանակապ, նեղլիկ մի կամուրջ կար, հիմա վերցրել-գցել են մի կողմ, մնում է

միայն ավտոյով անցնել, ամռանն ու աշնանը՝ անցաթուղթ ունեցող ավտոյով: Իսկ մեր «Վիլիսին» անցաթուղթ չկա, և սելավահունի մյուս ափում ուղեփակոցի մոտ կանգնած պահակը զգուշացնում է.

- Իզուր ավտոն չթրջեք, ափսոս է, սովխոզի դիրեկտորը, ընկեր Խաչատրյանը, էստեղ չէ,- հատ-հատ ասում է, որ լավ հասկանամ:

Ուղեփակոցի կողքին կշեռքն է. այգիների բերքն ու բարիքը այդ կշեռքի վրայով է անցնում, քիչ այն կողմ հոլիկ կա, գուցե սովխոզի դիրեկտորը հենց հոլիկում է և պահակին կարգադրել է,- եթե հարցնող կլինի, կասես այստեղ չեմ: Ամռան օրերին սովխոզների տերերը մեքենաներով մարդկանցից փախչում են:

- Լավ, թույլ տվեք անցնենք, այգիներում մի քիչ ման գանք,- սելավահունի իմ ափից բանակցում եմ:

- Չի կարելի, այ ընկեր,- պահակը պաշտոնական մերժում է:

Հե՜յ գիտի հա՜, էդ երբվանի՞ց էդպես... Երեկ-մյուս օր աչքները ջուր էր կտրում, ո՞վ կանցնի սելավը, տեսնես ո՞վ կգա մի փուշ կհանի անապատի աչքից, ո՞վ մի քար կվերցնի, թեկուզ ձեռքերը կրծքին ծալած մտիկ կտա իրենց ու քարերի կռիվը:

Հետո հոլիկից դուրս է գալիս սովխոզի գլխավոր գյուղատնտես Սարոյանը, ժպտում է և պահակին հարցնում.

- Դու էն մարդուն չե՞ս ճանաչում:

- Բա եղա՞վ, ո՞նց չեմ ճանաչում, մեզ մոտ էր աշխատում,- և դառնում է ինձ,- պաժալուստա...

Ուղեփակոցը անցնում ես թե չէ՝ այգիներ են. սելավահունի գալարուն իրանին կանաչ գոտի են կապել և հորձանք են տալիս Արտենի սարնիվեր, սարի աջ ու ձախ քարավանաշար բլուրները: Ջրանցքից վեր, լեռնափեշերի քարե բլրակները, որ մի ժամանակ անապատի կավահողի գույնն ունեին, հիմա գորշացել են, առել սարի տարիքն ու գույնը և ոչ ոք չի ասի, թե այդ քարակուտակները բերովի-ձեռքաշեն են:

Երկար ժամանակ է Սարոյանին չեմ տեսել, հիմա հանդիպել ենք, ու էլի լռության պետք ունեմ. ուզում եմ սուսուփուս նայել: Իսկ Սարոյանի խոսքի մեջ տարիներ առաջվա օրն ու ներկան հանդիպում են ու բաժանվում:

- էն առաջին տարվա բերքը հիշո՞ւմ ես ինչքան եղավ... Մի կուժ մաճառ: Հիշո՝ւմ ես, որ Վահագնի հոլիկում հավաքվել-բեֆ էինք անում, Եղիշե Կարապետյանը (սովխոզի նախկին դիրեկտորը) եկավ բռնացրեց... Ասում էր,- «բա դուք մա՝րդ եք... Ինձ ինչո՞ւ իմաց չեք տվել... Բա դա մարդկությո՞ւն է... էս տարի՝ ըհը»,- ձեռքը բարձրացնում է գլխից վեր:

Սարոյանը միջահասակ, նիհար, զրուցասեր մարդ է, Արտենի սովխոզի առաջին գլխավոր գյուղատնտես Տիգրան Հարությունյանի «միտումնավոր» հակադրությունը: Գուցեև սխալվում եմ, գուցե Տիգրանը ամենևին էլ մռայլ մարդ չէ. էն օրերի անապատի հոգսն էր ծանրացել նրա դեմքին...

- Օհո՛,- Սարոյանը արգելակում է մեքենան. այգեմիջյան ճամփով ջրի մի բարակ շիթ է ճվլկտում,- շատ ջուր կա, հիմա ճանապարհներն են

ջրում,- Սարգի՞ս,- ձայն է տալիս ջրվորին,- էդ Սարգիսը հայրենադարձ է: Չորս տարի առաջ եկավ...

Երաշտ է. Արաքս գետում ջուրը նվազել է:

- Թուրքերը բողոքել էին, գիտե՞ս,- հիշում է Սարոյանը,- աղմկում էին, թե ինչո՞ւ է մեր ջուրը պակասել, էստեղ մի բան կա:

Արաքս գետը, գիտենք, կիսարար է, գետի նույն հատվածում թալինցիների ու թուրքերի ջրանցքները հանդիպակաց ափերից ճակատ ճակատին են, իսկ այս տարի ջրանցքներում ջուրը պակաս է, որովհետև տարին է երաշտ, բայց թուրքերը բողոքել են, հավաքվել-եկել Արաքսի ափը, կանչել մերոնց.

- Ինչո՞ւ է մեր ջրանցքի ջուրը քիչ:

- Ձեր խմբում ինժեներ կա՞,- հարցին հարցով է պատասխանում Թալինի ջրային տնտեսության պետ աշնակցի Վաչիկ Խաչատրյանը:

- Ես եմ,- առաջանում է մեկը,- ծանոթանանք,- և ձեռքսեղմումի հետ հայերեն շշնջում,- ազգությամբ հայ եմ...

- Խնդրում եմ չափեք Արաքսի մակարդակը, ապա կզրուցենք:

Թուրքերի ինժեները չափում է գետի ջուրը, իրենց խմբի մյուս պատվիրակների կասկածոտ հայացքների տակ հաշվումներ կատարում և պարզվում է, որ ջրագողություն չկա:

- Այնուամենայնիվ, մեր ջուրը քիչ է, ջրի խիստ կարիք ունենք:

- Մենք նույնպես: Եվ ստիպված որոշել ենք Արփա լճից մի տասը օր ջուր բաց թողնել գետը, այստեղից վերցնել: Փոքրիկ լճակ է, կդատարկվի, բայց ստիպված ենք:

- Իսկ մենք ի՞նչ անենք,- մեկուսի նեղսրտում է թուրք պատվիրակը:

- Եթե իմ խորհուրդն է պետք,- պատասխանում է աշնակցի Վաչիկը,- Տալվորիկ գետից բերեք, հայրս ասում էր Մարաթուկի, Ծովասարի կողմերը ջուրը շատ առատ է:

Թուրքերը մռայլվում են, չեն ուզում ձեռք տալ աղուհացին, խմել մեր կոնյակը:

- Հետո մերոնք կատակել են, ասել են՝ ա՛յ մարդ, հարևաններ ենք, եկեք մի-մի բաժակ բան խմենք իրար հետ: Եվ միասին հացի են նստել... Սարգի՛ս...- գլխավոր գյուղատնտես Սարոյանը մեկեն ջղայնանում է,- էս ինչ դինջ մարդ է, տո՜, էսքան ջուրը մի շարք խաղող ջրած կլիներ:

Նայում եմ Արագած սարի կողմը և մտածում, «Չէ՜, առանց քեզ մեր բոլոր ջրանցքները ճաք կտան, առանց քո ամպուզամպի նույնիսկ թուրքերը յոլա չեն գնա... Երևացրու, քո հորիզոնի գլխին անշեջ պահիր կատարիդ «Լուսավորչի կանթեղը», Արագած»:

Ամռան միջօրեն ոսկե հալոցք է մաղում, և գլխամաղ վազերը քաղցր երազի մեջ են: Այգեմիջյան ճամփեզրի ծիրանենին, հենց այնպես՝ հովի համար տնկած ծիրանենին, կաթկթում է, տաք, գունձ-գունձ ոսկե զառանցանք է թափվում ճամփի խանձված սեզերի մեջ: Ծիրանանոցից գալիս է բարձված մեքենան, խցիկում նստած երևանցի մթերողը անուշ ժպտում է

գյուղատնտեսին:

- Լավ ծիրան է, բայց մի քիչ մանր է:

- Մանր չէ:

- Վերջը առաջին սորտ հաշվեցիք, էլի:

- Սևին սև են ասում, սպիտակին՝ սպիտակ,- Սարոյանը կարճ կապում է:

- Թե հասցրի, էսօր նորից ետ եմ գալու:

- Համեցեք:- Եվ շեղ նայում է մեքենայի ետևից,- էս մթերողները հետաքրքիր մարդիկ են. ոսկի տաս, մի անուն կկպցնեն... Գնանք ծիրանանոց, տես ինչ բերք է եղել... Հիշո՞ւմ ես սարեցիները ոնց էին ծառ տնկում, մինչև կեսը թաղում էին, իբր թե չչորանա...

* * *

Իրիկնապահ է: Կանգնած ենք ավանի կենտրոնական փողոցի եզրին, այնտեղ, ուր կուլտուրայի պալատն է կառուցվելու: Անպայման կառուցվելու է՝ հիմքն արդեն փորվել է: Ճամփեզրից երևում է Արտենի սարը: Սարի վրա մերթ ընդ մերթ փայլփլում է իրիկնապահի արևը. «սատանի եղունգների» անդրադարձումն է: Սարի փեշին այգիներն են, և թվում է, թե կանաչ շերտը շարժվում է, հանդարտ ու տարածուն մագլցում է սարնիվեր: Լեռներով ու սելավահունով շրջափակված այգիներն ավանի հայացքի տակ են, հավաք, իսկ շենի թիկունքի այգիները կտրակցոն են. կանաչ հեղեղի պես հոսում են բլուր-բլրակների շուրջբոլորը, ճոթ տալով, թռչելով ձորակների գլխից, գնում են դեպի Արաքս գետը:

Ծիրանենիները դուրս են պրծել տնամերձերի ցանկապատերից, կախվել ճամփեքի վրա, վազերը վարագուրել են պատշգամբները, տանիքներն են մագլցում և կանաչ խաղաղությամբ են կնքել իրիկնապահը, շեմերն ու տանիքները:

Օրը նշանավոր օր է արտենցիների համար. «Ծերախումբը» խնջույքի է գնացել: «Ծերախումբը» ավանի տարեցներն են: Մուքո քեռին ավանի ամենաառաջին բնակիչն է, Գառնիկի հետ հիմնվող շենի համար մի աշխարհ քար է կտրել, մեկը առաջին որմնադիրն է, մեկը՝ առաջին փուշ վառողը, մեկը առաջին... 95-ամյա Թաթոս պապն ավանի ամենատարեցն է... Բոլորը հիմա բանուգործից ձեռք են քաշել և ունեն հատուկ որոշում տարվա մեջ մի օր հավաքվել, բարձրանալ Արագած սարը խնջույքի: Օր առաջ ավանի մեծ ու փոքրին հայտնի է դառնում «Ծերախմբի» խնջույքի օրը: Առավոտյան ճանապարհում են, երեկոյան հավաքվում դիմավորելու: Հիմա ջահելներից շատերը աշխատանքից հետո տուն էլ չեն գնացել, բանվորական մեքենաներից իջել, նստոտել են մոտիկ պատերի տակ, տների ու ծիրանենիների ստվերներում, խումբ-խումբ կանգնել և սպասում են:

- Եկա՞ն...

Այս ու այն կողմից ձայն են տալիս և նայում հավաքատեղին մոտեցող բեռնատար ավտոյին:

- Ծերախումբը եկա՞վ:

Հավաքվում են ճամփի կենտրոնում, օղակում ավտոն, կատակում, աղմկում, Պայքարը ձեռքերը խփում է իրար,- տղե՜րք, հերս խմած է,- Նշանը մատնացույց է անում,- հլա Գառնիկ քեռո՜ւն, Գառնիկ քեռո՜ւն,- մնքենան շրջապատած աղմկում են,- արե՛ք ձեզ իջացնենք, արե՜ք...

Իսկ ծերունիները չեն շտապում. իրենց բարձրությունից ժպտում են՝ լուրջ ու շոյված: Ավտոյի խցիկը շնորհվել է Թաթոս բիձուն, բրիգադիր Ռազմիկի հորեղբայրն է: Ռազմիկը շտապ մոտենում է, բացում գիրկը՝

- Արի, հոխպեր:

Ավանում այս ու այնտեղ ճոթ է տալիս.

- Եկա՜ն... եկե՜լ են...- Կանչի հետ, որտեղից որտեղ, հիշում եմ Արտենի սարի ուսին շելլյան հատիչները որոնող ջահելներին: Հիշում եմ և Վահագնին հարցնում.

- Էս շելլյան հատիչները էլ չե՞ն երևում:

- Ուր է թե,- ուրախանում է, որ հիշել ենք,- երևային՝ մի լա՜վ հյուրասիրեինք... Սիրուն, լավ ջահելներ էին, չէ՞- հետո լուրջ հարցնում է,- լսիր, ինչո՞ւ չէինք սիրում նրանց, ի՞նչ էին արել խեղճերը, իրենց համար շելլյան հատիչներ էին ման գալիս, էլի:

- Շելլյան հատիչներ չէ, այգիներ էին որոնում,- ձեռքս մեկնում եմ Արտենի սարի կողմը,- նրանց որոնածը էս շենն էր:

3

Նոր մի ճանապարհ է ավելացել... Ավելի ճիշտ, այդ ճանապարհը Արագածոտն գավառում, է՜, վաղուց եղել է՝ Աշտարակի վերին գյուղերի ուխտավորներին տարել է Վաղարշապատ ու ետ բերել: Հետո ճամփան խաչակնքվել-թաղվել է, հիմա մարդիկ նորից հանել ու ձգել են գետնին՝ Ուջանի ու Կոշի արանքում, Երևան-Լենինական մայրուղուն ուղղահայաց: Ճիշտ է, սա էն ճամփի մի հատվածն է, բայց երբ ծայր է առել՝ կգնա: Անցյալ ամռանը դեռ չկար՝ դեռ որոնում էին... Չէ՜, էս անգամ՝ հնագետները չէ՜, տրակտորիստ տղերքն էին, կորած այդ ուխտավոր ճամփից էլ անլուր: Պարզապես նրանք քարն ու հողն էին ջոկջոկում իրարից, և Հեսուն գանգատվում էր.

- Տրակտորները չեն դիմանում, տրակտորները, մենք պինդ ենք:

Դար ու փոսերը քանդել խառնել էին իրար, կրակն ընկել քարերի ձեռքը: Եվ այդ քարերը կուտակելու համար նույնիսկ տեղ չկար՝ պիտի քշեին, է՜, էն դարի գլուխը:

Հռոմի կենտրոնական հեռուստատեսությունից օպերատորներ էին եկել. «Ինչպե՞ս են ապրում խորհրդային մարդիկ» հեռուստատեսային հաղորդումների յոթերորդ թե ութերորդ սերիան բաժին էր ընկել Հայաստանին: Աշտարակից գալուց, ճանապարհին, օպերատորները վրա-վրա հորանջում էին, մի տեսակ հոգնած, շրջապատի նկատմամբ անտարբեր:

- Մի սրանց ձևերին, էս եվրոպացիներին մտիկ,- Աշտարակի մեքենամե-

լիորատիվ կայանի դիրեկտոր Լիպարիտ Հովսեփյանը վիրավորվում է,- կարծես մենք ենք աղաչել, թե՝ եկեք տեսեք ինչ ենք անում, կհավանե՞ք, թե՝ չէ:

Իսկ երբ տեղ հասան, կանգնեցին տրակտորների աղմուկով ու քարերով լցված խոպանի գլխին, հռմցի օպերատորները շփոթված նայեցին իրար, և Զուզեպպինոյի աչքերում վառվեց արվեստագետի հայացքը:

- Հրաշք ենք նկարելու,- ասաց ընկերոջը:

Հետո ես ուրախացել էի Հեսու անվան համար, անհանգիստ շարժվում էի քարերի մեջ և ինձ թվում էր, թե բան եմ գտել, է՜, վաղուց կորած մի բան էդ անապատում եմ գտել, մագաղաթագիր, մամռոտ մի խաչքար, կլոր որձաքարերից շինված մի մատուռ... չգիտեմ ինչ ու ինչ, և մտքումս խաչվել էին լեռներում մոլորված սիզապատ կածանները, որոնց երբեք չեմ տեսել, բայց նրանք իմ երակներում գալարվում են: Եվ հենց Հեսու անունը ինձ հիշեցրեց, որ այդ ղռերում կորած մի ճամփա կա: Իսկ Հեսուի որոնածը դա չէր՝ այդ սալարկված ղռերում, նա որոնում էր հող...

Զուզեպպինոն ոգևորությունից գլուխը կորցրել էր. հա, հա մտնելու էր Հեսուի տրակտորի տակ, պոչին կանգնած քարաբեկորը եթե շուռ գար, օպերատորին տակով կաներ, իսկ նա այդ մասին չէր մտածում, ծնկած նկարահանում էր: Հեսուն վախեցած արգելակեց տրակտորը:

- Ա՜յ մարդ, հո շառ չե՞ս,- գոռաց,- հեռու գնա,- և խռոված դարձավ Լիպարիտին,- էս փորձանքը որտեղի՞ց բերիր, վերցրու տար:

Օպերատորը ժպտաց Հեսուին, հասկացրեց, թե մի վախեցիր, ինձ ոչինչ չի պատահի, ապա արագ նայեց շուրջբոլորը, վեր ու վար ամռան մշուշով լցված հորիզոնին, և մշուշից դուրս պրծած Արարատի ծերմակ ծակատին մեկեն բոցկլտաց հայացքը: Նա իրարանցումով հարմար դիրք ընտրեց, զգայուն արվեստագետի ջղային շարժումներով ընտրեց հարմար դիրք, և՛ խամրած երկնքում լողացող ծերմակը, և անապատը, և տրակտորն ու տրակտորի դեմ ցցված քարը, և Հեսուին առավ ապարատի մեջ: Երկար չկչկում էր ապարատը, ապա նա բորբոքված նայեց Հեսուին և զայրացած ձեռքով արեց՝ շարժվիր:

- Ջղային էլ տղա է երևում, գլուխը կուտի,- ամփոփեց Հեսուն:

Եվ Զուզեպպինոն ու ընկերը տրակտորի ետևից վազվզում էին, նկարում հողի տակից հենց նոր ելած քարերը, անհնազանդ, կամակորորեն գետնին կառչող քարերն ու տրակտորիստ տղերքի համառությունը, պողպատյա ճուպանով բլուրները քաշվող գողիաթ քարերը, դեպի բլուրները քշվող քարերը և այդ քարերից անձրևաջրի պես հոսող կավահողը, որ ծանր ու տաք նստում էր անապատի գլխին:

Հետո երբ ավարտել էին նկարահանումը և հոգնած քայլում էին դեպի մեքենան, Զուզեպպինոն ետ-ետ էր նայում, ավտո նստելուց առաջ երկար նայեց կոտրվող անապատին և ասաց.

- Իմ հայրենիքը Սիցիլիան է, խորդուբորդ. քարերի մեջ կորած այսպիսի տեղանք ինչքան ասեք կա, բայց ոչ մեկը չի մտածում մշակելու մասին:-

Ապա հակված լռեց և դարձավ ընկերոջը,- մեր սերիաների մեջ ամենալավը սա է,- և ինքն իրեն ասաց.- այս ֆիլմը ինձ շատ է պետք գալու... հայրենակիցներիս հետ սրանով պետք է խոսեմ:

- Նստեցեք,- ժպտալով առաջարկեց Լիպարիտը: Ջուզեպպինոն գլխով արեց, բայց հապաղեց, մեքենային հենված նա ծխում էր, նայում տրակտորիստների կողմը և գնալով տխրում: Եվ մինչև ասֆալտ դուրս գալն ու մինչև Ուջանի դուրանը ոչ մի խոսք չասաց, ծխում էր ու նայում շուրջբոլորը: Ապա խնդրեց, որ Լիպարիտը կանգնեցնի մեքենան, իջավ՝ նայեց Ուջան գյուղին, գյուղի թիկունքի սարին, որ երկնքից մի պուտ ջուր էր գողացել ու կանաչապատ առվով ճամփել ուջանցիներին, նայեց ընկերոջը, գլխով ակնարկեց առվի կողմը.

- Շատ ինքնատիպ է,- և դարձավ հարցրեց,- որտեղի՞ց է գալիս:

- Ամբերդից,- Լիպարիտը շիփ-շիտակ պատասխան տվեց, բայց Ջուզեպպինոյի հայացքից հասկացավ, որ երկնքից իջած առուն եվրոպացի օպերատորին կարգին հետաքրքրում է՝ սկսեց բացատրել, թե էսպես, էսպես. Ուջանի թիկունքի սարից վեր, մինչև Արագած, հազար սար ու ձոր կա, էդ ձորերից մեկը կոչվում է Ամբերդ, պռունկին համանուն բերդ կա, հայոց իշխաններ են նստել բերդում և իրենց Արագածոտն գավառը շենացնելու համար հրամայել են ձորի ջուրը հանել, ոռոգել դաշտերը: Հրամանը ի կատար է ածվել, և ձորից դուրս է եկել տասնմեկ ջրանցք: Իսկ դա եղել է դարեր առաջ, է՜, այնքան վաղուց, որ ջրանցքները գոցվել են և միայն ավանդազրույցներում են մնացել: «Ամբերդի տասնմեկ առուները»: Հետո էս ուջանցիները ելել, իրենց հարևան գյուղացիների հետ որոնել են կորած առուները՝ գտել են, վերանորոգել, և Ամբերդի ջուրը նորից հասել է էս սարերի գյուղացիներին: Ահա, ուջանցիների համար էլ էս առվով է գալիս: Իհարկե, դա էլ է շուտուց եղել:

- Հայրենական մեծ պատերազմի տարիներին,- շեշտեց Լիպարիտը:

- Պատերազմի ժամանա՞կ...

- Հենց՝ պատերազմի... Աշտարակի ծերունիները իմաստուն մարդիկ են, նրանք գիտեին, որ մերոնք հաղթելու են:

Ջուզեպպինոն հետաքրքիր նայեց Լիպարիտին: Երևում էր, որ մինչ այդ արվեստագետի աչքով չէր նայել, թե ինչպիսի դեմք ունի անապատը կոտրողների ղեկավարը, հետաքրքիր նայեց և նրա սև ու կլոր աչքերից, ալեխառն ու արտակարգ պինդ մազերից գոհ ժպտաց,

- Դուք աշտարակցի՞ եք:

- Չէ, Երևանում ծնված-մեծացած տղա եմ: Մորատատս է աշտարակցի, և հողի հետ ինձ շատ է կապում: Երևանում կարգին պաշտոնի էի, թողեցի եկա:

- Իսկ որքա՞ն են վարձատրում:

- Բավարար: Էս ավտոմեքենան էլ իմ սեփականն է. տասը տարի է վարում եմ, էդքան էլ կդիմանա:

Հետո մինչև Աշտարակ Ջուզեպպինոն լռեց և նրա կապույտ քներակը

ցնցվում էր: Իսկ Աշտարակում խմում էր անգուսպ, մոտիկ նստածներին համբուրում,- դուք հետաքրքիր ժողովուրդ եք... ես ձեզ սիրում եմ,- Լիպարիտին ասում էր,- իմ մորատատը Սիցիլիայում է, այս անգամ ես նրան տեսության եմ գնալու,- և չգիտես ինչու նյարդայնանում էր Լիպարիտի ժպտուն հայացքից,- այդպես մի նայիր ինձ և ձեռքը խփում էր սեղանին,- այս սերիայով ես դեռ կխոսեմ իմ հայրենակիցների հետ...

* * *

Հա՛, մի նոր ճանապարհ է բացվել: Ուջանի և Կոշի արանքում, Երևան-Լենինական մայրուղուց ծայր է առնում և հասնում է այնտեղ, ուր անցյալ ամռանը Զուզեպպինոն հեռուստատեսային ֆիլմ էր նկարահանում:

- Էդ ֆիլմը ցուցադրե՞լ են, թե՞ չէ,- հարցնում է Լիպարիտը,- հեռուստացույց դիտելու ժամանակ էլ չունեմ:

- Չգիտեմ:

Լիպարիտի հետ, իր սեփական «Մոսկվիչով», գնում ենք պատրաստի հողը նայելու: Նոր ճանապարհը, որ արդեն ասֆալտել են, անցնում է քարհանքի կողքով, այգետնկման համար պատրաստված հողը կես է անում և վարի գոգահովիտը չհասած կտրվում է: Այդ գոգահովտում ավանն է լինելու: Հիմա դեռ անուն չունի:

Ապագա շենի շուրջբոլորը ծավալվել է մայրացու դաշտը՝ իր հարկին վայել ծանրությամբ նստած է՝ շեկ, տաք, փխրուն. անձրև չի եկել, որ կեղևակալվի:

Անապատը ջարդող մեխանիզատոր տղերքը խումբ-խումբ բաժանվել են, Թալիշի և Կոշի ներքևի դռերում են, ձորափցիների ու բյուրականցիների դաշտերն են մաքրում քարերից, մի բրիգադ էլ Ուջանի տափարակը ձախակողմից փակող դարի գլխին է: Լանջի կեսը շիկավուն է, մեր կանգնած տեղից երևում է հնձված-արածեցված արտի պես, կեսը՝ գորշ, մռայլ, այդտեղ դեռ խոփ չի կպել:

- Արի գիտես ի՞նչ անենք,- Լիպարիտը աչքերը կկոցած նայում է դարի կողմը,- փորձենք էսպես ուղիղ հասնել դարի տակ: Եթե հասանք, մեքենան չքսեց, նշանակում է հողը լավ են հարթեցրել:

Փորձում ենք, և Լիպարիտը գոհ է մնում:

- Չէ՛, տղերքից գանգատվելը մեղք գործել կլինի:

Շիկացած օդում հալվել է տրակտորների աղմուկը: Աղմուկը տրակտորների խամրած ծխից ես զգում, և թվում է, թե լսում ես երկաթների ու քարերի ճկրտոցը: Սարի փեշին խափանված տրակտոր կա, ջարդված խոփ ու փխրեցուցիչ:

- Ափսոսդ գալիս է... Բայց երբ հողը պատրաստվում է, սրանք աչքիդ չեն երևում:

Ինչպես նոր իջած ձյուն, փխրուն է նոր հայտնված հողը, մինչև կոճերդ թաղվում ես, սարալանջում արմատ չի եղել, որ ընդերքի շեկ փոշին գունագունած հավաքի: Լիպարիտը հագնում է բանվորական սապոգները և նկա-

տում, որ իմ բանը դժվար է:

- Դու սպասիր, ես բարձրանամ տղերքի մոտ, գամ:

- Չէ՛, արի երկուսս էլ բոբիկանանք:

- Լավ բան ես ասում, բայց մենք բոբիկ քայլելու կարողությունը կորցրել ենք, կոշիկներին շատ ենք սովոր: Համ էլ օձ շատ կա:

Տղերքից մեկը կանգնում է տրակտորի խցիկին, ձեռքը թափահարում գլխից վեր՝ «Բա՛րև»:

«Բա՛րև»,- պատասխանում ենք:

Տրակտորիստը ձեռքով ցույց է տալիս ինձ, ձեռքով հարցնում, «Ո՞վ է, ի՞նչ է ուզում»,- և Լիպարիտի պատասխանը առնելուց հետո ցույց է տալիս արևը, հասկացնում, «Էս շոգ ու կրակին ի՞նչ գործ ունեք, թողեք գնացեք,- ձեռքերով մեզ քշում է,- գնացեք, գնացե՛ք»,- տրակտորի խցիկի գլխից իջնում, նստում է ղեկի մոտ և խամրած ծուխը նորից մեզ է հասցնում քար ու խոփի ճկրտոցը:

- Ազատություն տվեց մեզ,- ծիծաղում է Լիպարիտը,- գնանք Բյուրական, հող ունեմ հանձնելու:

* * *

- Մինչև Վիկտոր Համբարձումյանին չբերես, հողդ չեմ տա,- կատակ է, բայց այնքան լուրջ տոնով, որ Բյուրականի սովխոզի դիրեկտոր Խաչիկ Մնացականյանը, որ վաղուց ծանոթ է Լիպարիտին, տարակուսած նայում է:

- Թող Վիկտոր Համազասպովիչը գա, կանգնի հողի գլխին, հողը փեշքեշ անեմ:

Եվ կատակի ու պահի մեջ մարդու մոտ ծնվել է մի մեծ ցանկություն, առիթով ծանոթանալ Վիկտոր Համբարձումյանի հետ, կանգնել Խմորհատ բարձունքի վարի տափարակը, ասել, էսպես, էսպես, Վիկտոր Համազասպովիչ, էստեղ քսան արտ էր միջնակներով, խորդուբորդ, ոչ մի ակոս շիտակ չէր գնում, անշարժ քարերը ծռմռում էին, տեսեք ինչ քարեր են դուրս եկել, տոննանոց, տասը տոննանոց քարեր են, տրակտորի ուժը չէր պատում, որ դուրս բերեր: Հիմա՝ խնդրեմ, զանգվածային հարթ, սիրուն, ուզում են այգի տնկեն, ուզում են ծխախոտ մշակեն... Եվ այս ամենը մեր տղերքը մի ամսում արեցին, է՛, առավոտվա վեցից մինչև երեկոյանն ինը աշխատում էին... Հիմա էլ էն լանջն ենք ուզում քանդել, մեր պատրաստած էս հողի գլխից սկսենք ու իջնենք մինչև ձորի պռունկը, և, փաստորեն, էս տափարակն ու լանջը կմիանան, կդառնան մի հող: Հասկանալի է, էդ լանջի մշակումը տասնապատիկ դժվար է, բայց կանենք... Եվ ասի՝ գերմանացի էն Ռոբերտ Մարտենսը, որ հասնում է ձեր աստղադիտարանը, աչքաչքով տեսնում ու համոզվում՝ «Բյուրականից ճանապարհ է հարթված դեպի աստղերը», հայացքը երկնքից մի պահ էլ թող գցի էս կիրճը, ախր, մեր տղերքն էլ էս քարերի մեջ են աստղեր որոնում...

- Ակտը չեմ ստորագրի և վերջ,- Լիպարիտը իր կատակի մեջ համառում է:

- Ասացի՝ էստեղ չի,- ժպտում է սովխոզի դիրեկտորը:

- Խոսում ես, էլի, ո՞ւր գնացած կլինի:

- Հլա հարցին, Վիկտոր Համբարձումյանը ո՞ւր գնացած կլինի,- ծիծաղում է Մնացականյանը,- Մոսկվա, Փարիզ, Լոնդոն, որ Մարս էլ ասեմ, պիտի հավատաս: Վեր կաց, տղերքիդ համար էսօր ոչխար եմ մորթելու: Գնացինք:

- Տղերքը ոչխարի պետք չունեն,- մեկեն սրտդողում է,- ամեն մեկը, ամսական երեք-չորս հարյուր ռուբլի է ստանում, դու հողիդ տեր կանգնիր,- ոտքի է ելնում և դիմում «Վիլիսի» վարորդին,- Համբարձումյանի հոր շիրիմի մոտով կգնաս:

Խմորհատ բարձունքում կա մենակ մի շիրմաքար, գրանիտե, ծանրորեն փարված հողին:

«Աստ հանգչի
Համազասպ Աստուրի Համբարձումյան
Ծնյալ 1880 թ.
Ի Վասակաշեն (Բասարգեչար)
Վախճանյալ
1965 թ. փետրվարի 3-ին
Բանասեր
Բանաստեղծ
Թարգմանիչ»:

Ինչո՞ւ է կտակել, որ իր հանգստարանը այդտեղ, հենց Խմորհատ բարձունքին լինի: Ես ինձ իրավունք չեմ տալիս այդ տարօրինակ ու մեծ մարդու վերջին խոսքի «թարգմանիչը» լինել, դա հնարավոր էլ չէ և չեմ էլ փորձում հասկանալ սարի գլխին իր մենակությունը գրկած գերեզմանի խորհուրդը: Մենք լուռ կանգնած ենք շիրմաքարի մոտ, բայց մեր շուրջբոլորն ենք նայում և հանկարծ գլխի եմ ընկնում, որ շիրմաքարին երկար նայել չեմ կարող, մի քիչ վեր, աստղադիտարանի աստղափայլ գմբեթներ են՝ թռցնում են հայացքդ ու կապում Արագածի ճերմակ ամպերին, իսկ վարը՝ հորիզոնը, Արարատի ու լեռնապարի հետ կարված ծանր հորիզոնը, որ թվում է, թե կշիռ էլ ունի, պարզապես քաշում է հայացքդ:

Հետո Խմորհատի քարքարոտ լանջով իջնում ենք տափարակը: Դաշտային վագոնիկի դռանը խմբված մեխանիզատորները վրագլուխ են թափ տալիս, որ նստեն ճաշվահացի: Բոլորը չսափրված են և ներքնաշապիկներով:

- Վարպետ չե՞ք բերել,- հարցնում է Սերյոժան:

- Ի՞նչ վարպետ:

- Քարտաշ:

Հողամասի եզրին բարձր ու հաստ մի քարաբեկոր է կանգնած: Դեռ կարգին արև չի կերել և գոգահովտի հողի գույն ունի: Տղաները որոշել են քարը կանգնեցնել մի հարմար տեղ, գուցե հենց բարձունքի վրա, և մի եր-

կու խոսքով, փորագրել տան տափարակի պատմությունն ու իրենց անունները:

- Բայց կարգին վարպետ է հարկավոր, հա՜,- իր կարծիքն է հայտնում տեղամասի պետ Սիսակ Դարբինյանը: (Ժամանակին Ապարանի մեքենատրակտորային կայանի դիրեկտորն է եղել և նորավարտ ինժեներ-մեխանիկ Լիպարիտ Հովսեփյանին հրամանագրել-ընդունել է աշխատանքի: Հետո բաժանվել են ու ահագին ընդմիջումից հետո հանդիպել մի նոր հիմնարկում, միայն թե ղեկավարն այս անգամ Լիպարիտ Հովսեփյանն է): - Գրագետ պետք է լինի, որ տառասխալներ չանի,- զգուշացնում է և քթի տակ դնդնում մի հին երգ «Ապարանա ջրի» մասին:

Վարպետը թղթից կարտագրի, ընկեր Դարբինյան,- հիշեցնում է բուլդոզերավար Սերյոժան,- վարպետը հո իրենից չի՛ հնարելու, որ սխալ անի:

- Հա՜... Ուրեմն պետք է պարզ գրել, որ արտագրելուց չսխալվի:

Լիպարիտի հետ նստած ենք ձևակերպելու ի հիշատակ փորագրվող արձանագրությունը:

- Տղերք,- ժպտում է Լիպարիտը,- իմ անունն էլ գրե՞մ:

Տղերքը չորս կողմից վրա են տալիս:

- Բա եղա՞վ, ընկեր Հովսեփյան, բա առանց քե՞զ, բա եղա՞վ... անկեղծ, միամիտ իրարանցումով հավաքվել են մեր գլխին, մոռացել են իրենց ու քարերի կռիվը, ո՛չ հոգնած են, ո՛չ գանգատ ու պահանջ ունեն: Անցած գիշեր, մի շաբաթվա աշխատավարձի հետ, դադրությունը թափել էին Բյուրականի ճաշարանում, բյուրականցիների հետ կիսել իրենց ուրախությունը,- տափարակի հետ հաշիվներս մաքրել ենք,- և հիմա հավաքվել են մեր գլխին, անհամբեր սպասում են, թե՝ ի հիշատակ, ինչ է փորագրվելու...

«Այս է վկա Խմորհատ տափարակի, որ բազում փոսորակներով անհարթ էր և լցված այսպիսի քարերով... Տափարակը քանդվեց և հարդարվեց ձեռք՝ Լիպարիտ Հովսեփյանի, Սիսակ Դարբինյանի, Սերյոժա Մաղոյանի, Պարգև Հակոբյանի, Թելման Մարտիրոսյանի, Հովսեփ Հակոբյանի, Սարգիս Պողոսյանի, Գուրգեն Թադևոսյանի... Խմորհատ տափարակին՝ արև և կանաչ խաղաղություն: Ամեն... 1970 թվական, օգոստոս»:

Մեր արևը կա, մեր լեռները կան, որ կարող են ճաք տալ, պայթել, խոնարհվել, ցածրանալ, դառնալ տափարակ հող, իսկ մեր ջուրը երկնքից է գալիս, ամպերը պետք է բերեն...

- Էս աղբյուրները պետք է վերցնեն խողովակի մեջ, տանեն,- ժորան երեկ-մյուս օրվա իր լսածն է հայտնում:

Աղբյուրները Ապարանի «Քառասուն աղբյուրներն» են, որ բխում են ավանի կենտրոնի մի գիրկ բլրակից, խառնվում իրար և կազմում Քասախ գետը:

- Ո՞ւր են տանելու:

- Ներքևները,- անորոշ ձեռքով է անում:

Մի տասը-տասնհինգ տարի հետո Հայաստանում ինչքան աղբյուրներ

կան՝ կմտնեն խողովակների մեջ. քաղաքներում ու ավաններում դուրս կգան... Եվ ճիշտն այն կլինի, որ կինոօպերատորները հենց էգուցվանից նկարահանեն մեր աղբյուրների ակունքներն ու ափերը, գալիք սերունդները իսկական աղբյուրներ կինոնկարներում պետք է տեսնեն:

Նստած ենք Քասախ գետը բխող բլրակին, ամեն մեկս՝ մի աղբյուրի գլխի, զրուցում ենք ու իրար չենք նայում, նայում ենք խլբլդացող ջրերին, որ քարերի տակից լուսաշխարհ են դուրս գալիս թե չէ՝ միանգամից հնանում են, դառնում միլիոն-միլիոն տարեկան:

- Էս ջրերը որ տարան, Ապարանի ջրամբարն ինչո՞վ է լցվելու,– հարցնում եմ:

Ժորան առանց գլուխը բարձրացնելու ձեռքով ցույց է տալիս Արագածը, որ մոտ-մոտ է, մեր թարթիչների տակ է: Հյուսսակողմի գագաթը մի ծվեն ճերմակ ամպ է ծխում, պիտի ծլի, ծավալվի՝ անձրև բերի: «Էդ ծվենը Արագածի «Լուսավորչի կանթեղն է»,- հիշում եմ ավանդազրույցը:

- Եվ Ծաղկունյաց լեռների հեղեղատներով,- ավելացնում է Ժորան:

Լռակյաց, բչախոս տղա է, շրջանային «Ծաղկունք» թերթի խմբագրի տեղակալն է, ինչքան հանդիպել ենք, նույն լրջությունն եմ տեսել դեմքին, նույն զուսպ ժպիտը, ոչ շուտ ոգևորվում է, ոչ շուտ կոտրվում:

- Ամեն տարի հո այսպիսի երաշտ չի՞ լինի,- նայում է ճանապարհի կողմը,- մեքենան եկավ,- և նորից հիշեցնում է,- Քասախ գյուղից լիճը հեռացել է:

Իսկ իմ մտապատկերում մնում է լճի առաջին գարունքվա ջուրը: Վանքի թաղը, որ բարձրում, ձորալանջին էր, նոր էր դատարկվում: Ջուրը եկեղեցուն ու թաղի տները չէր հասնելու, երբեք չի հասնելու, բայց մարդիկ բարձում էին քոչերը: Ներքին թաղեցիները կարող էին բարձրանալ ու Վանքի թաղից վեր կառուցել տներ, շատերը հենց այդ էին ուզում, բայց գյուղը տեղահանել-վերաբնակեցնելու որոշումը քչերի կողմն էր՝ նրանք ուժեղ էին, և Քասախ գյուղը դատարկվում էր:

Հիմա... Հենց այն տան մոտից, որ ջրամբարի առաջին գարնանը շրջապատված էր ջրով. կտուրին քնած մնացած շունը արթնացել ու ոռնում էր, հենց այդ տան փլատակներին կանգնած նայում եմ ձոր ու ձոր, Քասախ գետի հունն ի վար, իսկ լճի ճոթը չի երևում, քաշվել-գնացել է, տեղը թողնելով տիղմ ու ավազ: Համր տները շրջապատված են մարդահասակ փշերով,

Ամենազարմանալին դրանք են, օձերի պես պոչներին կանգնած այդ փշերը: Ես Քասախ գյուղում եղել եմ նաև շեն ժամանակ, այդ գյուղի հողը փուշ ծնող չէր. մամռոտ պատաշարերով տնամերձերում լեռնային ցածրաճ կանաչն էր, հենց շեմի մոտ ձնծաղիկ էր ծլում, կտուրին՝ մայիսյան ծաղիկ, մարագների խոնավ պատերից կախվում էին երեքնուկների վարդագույն զանգակները, գյուղի պորտաբաց երեխաները վազվզում, ծտան պաշարով, ցանցապատ փողոցներով իջնում էին գյուղի դիմացի մարգագետինը, որը հիմա ավազի ու տիղմի տակ է: Այս գյուղի հողը փուշ ծնող

չէր՝ որտեղի՞ց են հայտնվել և պոչներին կանգնած օձերի պես շրջապատել լքված տները: Նրանք, այդ փշերը, թիկունք ունեին և դեմք՝ ամռան միջոցին կճոտած և նրանց կճոտ դեմքերը ուղղված էին գոց դռները: Ինձ թվաց նաև, որ այդ փշերը շարժվում են՝ հաստատակամ ու նպատակադիր...

Այդքան անշունչ և այդքան կենդանի փշեր չէի տեսել:

- Վեր կենաս՝ տրորես, կրակ տաս...- ջղայնանում եմ:

- Նորից կծլեն,- ժորան ձեռքը թափ է տալիս:

Փշերը սպանելու համար կամ գոց դռները պետք է բացել, կամ Արագածից հեղեղ պետք է պոկվի՝ լցնի ջրամբարը, տակով անի այդ սարսռազդու պատկերը...

Եկեղեցու պատի տակ նստած երկու ծերունի ու մի պառավ մեզ են նայում: Մոտենում, բարևում ենք: Պատասխանում են չկամ: Ճերմակ մազերով ու պինդ ծերունին նախկին Քասախ գյուղի դարբին ու հյուսն Մկրտիչն է, կուզը շալակած Հովակ քեռին նախկին Քասախ գյուղի հովիվն է եղել, չորչրուկ տատը նախկին Քասախի կթվորուհի Սոֆոն է:

- Ինչո՞ւ եք դատարկ ձեռք,– Մկրտիչ քեռին հարց է տալիս, ապա տեսնում է, որ մենք տարակուսած իրար ենք նայում, ավելացնում է,- ձեր բահն ու քլունգը որտե՞ղ են,- լռում է, սպասում պատասխանի, չկա, ավելացնում է,- «Վիլիսի» մե՞ջն է, հա՞,- լռում է, սպասում պատասխանի, ավելացնում՝ ինչո՞ւ եք քչվոր, վանքը երկուսով քանդե՞լ կլինի,- լռում է, զայրանում, որ չեն պատասխանում՝ անորոշ հայհոյում է և դառնում պառավին,- Սոֆո, չորցած արև, մի՞տդ է:

- Ի՞նչը:

- Չոռ ու ցավ,- դառնում է գլուխը ծնկներին կախած ընկերոջը,- Հովակ, սատկած Հովակ, խլվլա, մեռա՞ր,- բաց-բաց հայհոյում է, պառավը չանչ է անում, և նա հայհոյանքը շուռ է տալիս պառավի կողմ:

Նոր բնակատեղից (որը Երևանին մոտիկ սովխոզն է) եկել են ամռան ամիսները իրենց Քասախ գյուղում անցկացնելու, կենում են Վանքի թաղի անվնաս տներում, հավաքվում եկեղեցու պատի տակ, նայում պոչը քաշած-հեռացած լճի կողմ, հորինում, թե գյուղը վերադառնալու մասին խոսք կա, բայց համագյուղացիներից նրանք, ովքեր սովխոզում պաշտոններ ունեն, խանգարում են: Եվ վիճում են, և՛ հայհոյում:

- Մի բան հարցնեմ, կիմանա՞ք:

Մկրտիչ քեռու շնչից պառավը հասկանում է, որ նրա հարցը իրենց ամենօրյա հույս ու հուսախաբության հետ կապ ունի, քաշում է ծերունու փեշը, թե՝ բացբերանություն մի արա, Աստված գիտե սրանք ինչ մարդիկ են:

- Անխելք Սոֆո,- բամփում է,- չե՞ս տեսնում, սրանք գրի հետ գործ ունեցող մարդիկ են, սրանցից վնաս չկա...

- Թե կիմանա՞մ... ես քանդողի...- վանքի թիկունքից հասնող հայհոյանքը խոսքը կտրում է: Ապա երևում է հայհոյողը, միջին տարիքի կին է՝ ձեռքերը հետևին դրած, աչքերում կռիվ: Ամուսնու հետ սովխոզից հենց նոր է եկել:

- Տանս կտուրը ծակել են, ո՞վ է ծակել:

- Փլե՞լ է,- շտկում է Մկրտիչ քեռին:

- Չէ, իմ տան կտուրը ամուր էր, չէր ծակվի: Ծակել են: Ո՞վ է ծակել: Թե կիմանա՜մ, ես քանդողի...- հայհոյում է, ամուսինը փորձում է կարգի հրավիրել:

- Քո գործը չէ,- լռեցնում է,- ով որ շուտ է եկել գեղ, նա է իմ տան կտուրը ծակել: Թե կիմանա՜մ...

Մկրտիչ քեռին գլուխը կախ փայտ է տաշում: Սոֆո տատը նստած տեղը անհանգիստ շարժվում է, իսկ քեռի Հովակը մեջքը հենել է վանքի պատին, կուզը ցցել, քիթը կպցրել ծնկներին, ննջում է. կես ու պռատ լսում կռվով հայտնած կնոջ գանգատն ու հայհոյանքը և գլխի չի ընկնում: Սոֆո տատը իրեն գցում է ծերունու կողքը, քաշում թևից, փսփսում ականջին, դառնում ձեռքերը տղամարդավարի ետևին դրած կնոջը:

- Ամենաառաջ էս մարդն է եկել... Հովակ տղա, ձեն հանե,- բորբոքում է ծերունուն:

Եվ տխուր, և ծիծաղելի էր այդ ավեր տնատերերի անզիջում կռիվն ու հայհոյանքը...

- Մեր ներկայությամբ ավելի են բորբոքվում, գնանք,- նկատում է Ժորան, և առանց մնաս բարևի հեռանում ենք: Լիճը տեսնելու համար պետք է նորից դառնանք Քուչակ, այնտեղից՝ լճի սկիզբը, պատվարին սեղմված, կուչ եկած ջրի մոտ:

Կա հնուց ավանդված մի զրույց, թե՝

«Արագածի, Արա լեռան և Ծաղկունյաց լեռնապարի գրկում, ներկա «Ապարանի ջրամբարի» տեղում մի ժամանակ լիճ է եղել: Ծաղկունյաց ծով, որի ափերին երկու տեղ ելք են բացել և ջուրը բաց թողել՝ հայոց ջրատոչոր հողերն այգիների վերածելու: Ապա... Թշնամին չկարողացավ հանդուրժել հայոց հողին սպասվելիք ծաղկումն ու փթթումը, դավադրաբար, ժայռերի տակից մի քանի տեղ անցք բացեց, ջուրը հոսեց, և արագ պակասեց «ծովը»: Այդ ժամանակ, թագավորը խորհրդի հավաքեց երկրի գիտուն մարդկանց, բայց սրանք ելք չգտան:

- Ես գիտեմ ելքը,- ձայն տվեց լեռներից նոր իջած մի հովիվ:- մեր երկրում ինչքան ոչխարի հոտ կա, պետք է խուզել, բրդի կույտերով ես կփակեմ ջրի բոլոր անցքերը, միայն թե մի ոչխար էլ չպիտի մնա առանց խուզվելու:

Թագավորը հրաման արձակեց, և երկրի բոլոր կողմերից սայլեր եկան՝ բեռնված բրդի դեզերով: Սակայն հովվին էլ չհաջողվեց փակել կորչող ջրի ճամփան:

- Կա-չկա,- ասաց սա,- մեկն իր ոչխարը չի խուզել: Երբ ստուգեցին հովվի ասածը, տեսան՝ մի իշխան, իրոք, թաքցրել է մի ոսկեգեղմ ոչխար, որի բրդով ուզում էր զարդարել իր ապարանքը:

Իսկ «ծովը» ժամեժամ ցամաքում էր... Ի վերջո, սև կտորին դրված ճերմակ կարկատանի նման՝ երկրի վրա մի լճակ մնաց փայլփլուն: Արագածի

Սև լիճն էր դա...»:

Այսպե՞ս... Մեր հող ու ջրի թշնամիներին բան չունեմ ասելու: Թշնամին թշնամի է և ձեռքից գա իր թշնամու ծովի հատակն էլ կծակի, ինչպես որ Ապարանի ծովն են մի քանի տեղից ծակել, ցամաքեցրել: Ա՛յ մեր էն իշխանի արածն ուրիշ է. էդ մեկը արդեն թշնամին չէր կարող անել, չէր կարող՝ ճակատին սև տառերով թշնամի գրած մարդը չէր կարող գալ, դառնալ հայոց հող ու ջրին տեր հայ իշխան. հետո էլ մի ծով ջուր փոխել մի «ոսկեգեղմ ոչխարի» բրդի հետ: Թե չէ, ո՞վ է իմանում, գուցե էն հովիվը, իրոք, աստվածատուր-իմաստուն է եղել, գուցե հենց էդ մի ոչխարի բուրդն է պակասել ծովը պահելու համար: Մանավանդ որ ծովը ճիշտ ու ճիշտ եղել է. գիտնականները հաստատել են ավանդագրույցը: «Ապարանի ավազանը ժամանակին հաջորդաբար եղել է անկողինը միջաշխարհային մի ծովի, ապա ծովալճակի, ի վերջո, լճի: Նա տարածվել է Իլան-Չալանից (այժմ՝ Արտաշավան) մինչև Միրաք գյուղի սահմանները»:

Եվ եթե էդ գծուծ իշխանը չէ պատճառը, Ապարանի ծովը ո՞ւր կորավ: Արագածի հողը ջուր չի՞ պահում... (Հնուց մի ուրիշ զրույց ասում է՝ մի հովվի ծխամորճը ընկնում է Արագածի Սև լիճը ու էդ ծխամորճը մի ուրիշ հովվիվ գտնում է Արարատյան դաշտում՝ Այդր լճում): Հավատա՞լ, չհավատա՞լ, ո՞րն է ճիշտը... Քիչ է մնում վեր կենաս ու դառնաս երկրաբան... Միամիտ բան եմ ասում. Ապարանի ջրամբարը կառուցելուց առաջ երկրաբանները պարզել են, է՜, ինչքան ժամանակ երկրաբանների մի խումբ ծակծկում էր ապագա ջրամբարի հատակն ու կողերը... Հազար տեղ ծակեցին, որոշեցին հողի կազմն ու ջրաթափանցելիությունը և կանգնեցին մի խոսքի՝ այստեղ ջրամբար կառուցել կարելի է:

Ես կարգին տնտեսագետ չէի լինի. մի ժամանակ կարծում էի, երբ փակվի Քասախ գետի հունը, և Ծաղկունյաց լեռներում ծնծղա Ապարանի լիճը, Քասախ գետը կկտրվի, ու գետի հունն ի վար ձորը լցված ուռենիները կչորանան... Եղբայրս, որ հիմա տնտեսագետ է, իսկ այն ժամանակ երեխա տղա էր, ծիծաղում էր մտահոգությանս վրա:

«Ուռենիների ցա՞վն է... Քասախ գետը էդպես ո՞ւր է գնում»:

«Էջմիածին, Արարատյան դաշտ»:

«Պարապ տե՞ղ է գնում, դաշտերն է ջրում, չէ՞»:

«Ուռենիների ցավն է»,- ծիծաղում էր եղբայրս:

Եվ գլխի ընկա, որ Ապարանի ծովը շինվում է Արագածի ձյուների, Արագածի ամպուզամպի հույսով... Իսկ այս տարի երաշտ է, անհորմալ, տեսար մի ամսվա անձրևը կես ժամվա կարկուտ դարձավ. թափվեց խեղճ մի սարի գլխի, պոկվեց հեղեղ քշեց, ասենք, մեր գյուղի ոչխարները, և գյուղացիները ոչխարները մոռացած՝ ափսոսանքով նայեցին պարապ ձորով պարապ տեղը գնացող հեղեղի ետևից:

Այս տարի Ապարանի լճում եղածը մի բուռ է՝ մակարդակը ջրկափանից իջել է, և Քասախ գետը, որ հիմա դեռ լիճն է թափվում, բանտարկվումմնում է. լճից դուրս գալ, պատվարից հետո ճանապարհը շարունակել չի

կարող: Ուրեմն էս ամռան կեսին ձորի ուռենիները... էլի՝ ուռենիները... Ուրեմն էս ամռան կեսին էջմիածնի այգիները չորանա՞ն... Արգնի-Շամիրամ ջրանցքի երկրորդ հերթի մայրուղին որ գալիս է, մի տեղ Քասախի ձորն է կտրում, հենց այդտեղ մայր ջրանցքից ահագին ջուր են բաց թողել ձորը, Քասախ գետի փոխարեն գնում է էջմիածնի այգիները ջրելու... Շեն կենաս, Սևան, Արարատյան դաշտեցիները քո շռայլությունը չեն ուրանա. էս է, հա՛, գինին ու օղին դուրս եկավ, ուրիշ տեղ վաճառքի չեն տանի՝ կառնեն-կբերեն Սևանի փրկիչ թունելագործների մոտ...

- Անցյալ տարվա գարնանը ալիքները էս պատվարի գլխից թռչում էին,- հիշում է Ժորան:

Ուրեմն՝ Ապարանի լիճը պոնկեպռունկ լցվել է և ավելցուկը կողքի ջրթափով գնացել է ձորը: Բա էդքան ջուրն ի՞նչ եղավ, հիմնական թունելը, որ ջուրը լճից պետք է դուրս բերի՝ «Հայոց ջրատոչոր հողերը այգիների վերածելու», նոր-նոր պատրաստել է, բա անցյալ գարունքվա ութ հարյուր հեկտար մակերեսով ջուրը գոլորշիացավ, ի՞նչ եղավ...

- Մաղում է, շատ է մաղում,- հայացքը պատվարի մոտ կուչ եկած ջրին, Ժորան գլուխը տանում-բերում է:

Հինգ տարի առաջ, լճի բացման արարողությանը ներկա էի, շինարարները իրենց հզոր մեքենաները առել-հեռացել էին, լճի ձախ ափին միայն մի հորատիչ կար, ցեմենտաջուր էր սրսկում՝ ջուրը մաղվում է: Հիմա ցեմենտաջուր սրսկողները հինգն են, անցել են աջ ափը...

- Ամիսը հինգ հարյուր տոննա ցեմենտ ենք սրսկում,- ասում է Սուրիկը: Քուչակ գյուղից է, հինգ տարի է նույն գործին է՝ տղերքի հետ լճի ափերը մոտիկ-մոտիկ հորատում է, ցեմենտաջուր է սրսկում, որ Ապարանի ծովը չմաղի:

Է՛, մի խումբ ընտիր երկրաբաններ սխալվել չեն կարող, երկրաբանները ճիշտ են, ջուրն է սխալ, որ մի տեղ չի կանգնում, ինչքան ժամանակ է, մեր թշնամիների ջրաղացն է պտտում: Ժամանակին էն իշխանը իր ոչխարի բրդի հետ, էդ... էդ... բայց ես հիմա նրա հետ գործ չունեմ, հիմա արդեն ուշ է, հայհոյելն ու զայրույթից ճաքելը անհույս բան է, իմ հույսը դու ես, Արագած...

Ծխախոտ եմ վառում ու նստում լճափի քարերին:

Ծաղկունյաց սարերի կողմից լճին է մոտենում մի ծերունի՝ տաբատի փողքերը բրդե գուլպաների մեջ հավաք, ձեռնափայտը անթատակերով սեղմել է թիկունքին, ձեռնափայտը շալակել է ու խոնարհված գալիս է: Հասնում է պատվարի ցայտաղբյուրին, գլուխը տմբտմբացնում, երևի բողոքում է,- ո՞ւր ես... քարափը թողած, եկար կանգնեցիր ասֆալտին... Առավոտից քեզ եմ որոնում,- ձեռնափայտը շալակից վար է բերում, խոնարհվում ցայտաղբյուրին, թրջում դեմքը, բեղը, հետո ծանր նստում է, հենվում ցայտաղբյուրին, հայացքը կախում լճի մեջ:

Ծերունին հանում է գլխարկը. հագցնում ծնկին, նայում Արագածի կողմը, և նրա շուրթերը մրմնջում են: Ի՞նչ է ուզում... Ես մտքումս հորինում եմ

լեռներից լճափ իջած ծերունու մրմունջը.

«Երևացրու քո «Լուսավորիչ կանթեղը», Արագած... ես մեղավոր եմ, դու արդար, բայց քո որոտալու փոխարեն ես եմ գոռգոռում, հալածում քո ամպերը... Դու մեծ ես, քո բարձրությունից նայիր իմ փոքրությանը և ներիր... Ամպուզամպ արա, քո ծեր ճակատի շանթերով բաց հեղեղատի ճամփան, թող գա՝ լցնի այս դատարկ լիճը... Ուղարկիր՝ ուղարկիր անխնա՝ մեծահոգաբար վճարիր քո էն անարժան իշխանիկի գծուծության դիմաց և այս Ծաղկունյաց լեռներում մի լիճ ջուր պահիր՝ և գարունքին, և ամռանը, և գիշեր ու զօր... Դու իմ հավատը աներկմիտ, ես քու ուխտավորը»:

Իսկ և իսկ ավանդազրույցի իմաստուն հովիվն էր:

1970